

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR - “MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան - ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян - СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan - THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան - ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян - РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan - THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան - ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian - ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян - ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan - GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան - ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян - НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian - ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան - ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лиза Каримян - КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ «КОНТАКТНОЙ» ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS). 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY). 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱՎԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА. 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS. 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ. 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США. 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA. 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА. 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyian – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՊԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS..... 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Գաղարյան

ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂՎԱԾԸ

***Հիմնաբառեր.** Թոմաս Բարլայլ, Է. Գիբբոն, Դ. Հյուս, լուսավորական պատմագրություն, աշխարհիկ ավետարան, Յ. Գ. Հերդեր, իստորիցիստական ըմբռնում, սենսիվոնականներ, ավանդական պատմագրություն, պոեզիա, մարգարեական պատմություն, կենսագրություն, կատարյալ պատմաբան, Նովալիս, պատմության «խտացում», «իմաստուն մոռացություն», «իմաստուն հիշողություն», «ընտրասերում», գրական պատմություն:*

Թոմաս Բարլայլ (1795-1881) ապրում և ստեղծագործում էր մի ժամանակ, երբ պատմության գրության կերպը նշանակալի փոփոխությունների հողմով ուղղվում էր: 19-րդ դարի 1-ին կեսին գերմանացի պատմաբանները, առաջնորդությամբ Լ. ֆոն Ռանկեի, մշակեցին մասնագիտական մեթոդաբանության տիպական մոտեցումները՝ պատմական փաստերն ու վկայությունները հստակորեն սահմանելու աղաճով: Դարավերջին այդ չափորոշիչներն արդեն կանոնական էին Մեծ Բրիտանիայում, սակայն դարիս արշալույսին դրանք տակավին հեռու էին սահմանված լինելուց, և բրիտանացի պատմաբանի ուսումնառությունը քիչ էր տարբերվում նրանից, ինչ որ հարյուր տարի առաջ էր, երբ Է. Գիբբոնն ու Դ. Հյուսը գրում էին իրենց պատմական երկերը¹: Հանգույն վերջիններիս և ժամանակակիցներից շատերի՝ Բարլայլը պատմությունը դիտում էր իբրև գրականության ճյուղ և ոչ որպես ակադեմիական գիտակարգ՝ համարելով այն արձակ գրականության թերևս բարձրագույն ձևը²: Հայսմ Բարլայլն ի պատմություն եկավ ոչ թե բուն պատմագիտական-պատմագրական, այլ արվեստագիտական «դիտավորությամբ»³: Նա հանդես էր գալիս որպես մի ինքնատիպ

* Հոդվածը ներկայացվել է 07.09.2020 թ., հրատարակության երաշխավորվել էՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանի կողմից (11.09.2020 թ.), ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Տե՛ս Chris R. Vanden Bossche, *Introduction, in Thomas Carlyle, Historical Essays. Ed. Chris R. Vanden Bossche. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley, Los Angeles: University of California Press, 2002, էջ xix (այսուհետ՝ Historical Essays):*

² Տե՛ս Louise M. Young. *Thomas Carlyle and the Art of History. Philadelphia, 1939, էջ 33: Հարկ ենք համարում նկատել, որ պատմության՝ իբրև գրական ժանրի կամ գրականության ճյուղի այս ըմբռնումը բնավ չի նսեմացնում պատմաբան-պատմագետի որակները: Պատմության և գրականության սերտ աղերսները հումանիտար մտքի պատմության մեջ սկսեցին նորովի քննվել նախորդ դարի երկրորդ կեսից սկսյալ, որի բարձրակետն էր հանդիսանալու Հայդեն Ուայթի «Մետապատմություն»-ը (1973), որում հեղինակը փորձ է անում ցույց տալու, թե ինչպես են 19-րդ դարի պատմական երկերը հղացվել ըստ գրական ժանրերի (Hayden White. *Metahistory: The Historical Imagination in Nineteenth-Century Europe. Baltimore: Johns Hopkins University Press, 40th Anniversary Edition, 2014, 480 էջ): Այսօր պատմության և գրականության փոխառնչություններն ուսումնասիրվում են նարատիվիկ մի ուսման ուղիով, որը բանաձևվում է իբրև մի տեսություն, համաձայն որի՝ «պատմությունն ու հնարապատումը (fiction) ստեղծվում են լեզվական միջոցներով և տարբերվում միմյանից տեքստի ճշմարտացիության առումով» (հանգամանորեն տե՛ս Karen Hellekson. *Toward a Taxonomy of the Alternate History Genre, in Extrapolation, Kent State University Press, 41.3, 2000, էջ 248-256):***

³ Տե՛ս Louise M. Young, *նշվ. աշխ., էջ 33: Յանգն այս առումով առաձևակի ուշադրության է առնում Շիլլերի՝ դեպի պատմագրություն հակվելու (որպես պատմագրում պոեզիայից ու հնարապատումից) շարժառիթների բարլայլյան քննությունը: Նախ և առաջ, ըստ Բարլայլի՝ Շիլլերի ընդունակությունները գերապանցապես հարիր*

«պատմաբան-արվեստագործ»¹, որը ձգտում է անցյալի «վերակենդանացմանը»՝ պատմական փաստերի ու եղելությունների վերհանումը ցայտուն գրական միջոցներով խարսխելով վավերական վկայությունների վրա: 18-րդ դարի պատմագրության գործնական ու բանապաշտական կանխադրույթը, դրա ներհակությունը պատմական անցքերի բնագանցական, իդեալիստական և կրոնական մեկնություններին տրամագծորեն հակադիր էին պատմության իմաստի և կարևորության մասին Քարլայլի ըմբռնումներին: Այդուհանդերձ, ստեղծագործելով հյում-ռոբերտսոն-գիբբոնյան «գրական» ավանդույթում՝ Քարլայլն իրագեց էր պատմության վերաբերյալ ձևավորվող նոր հայացքներին, իսկ նրա պատկերացումներն ու ընկալումները պատմության օբյեկտի ու սուբյեկտի բանաձևման հարցում ակներևաբար և շահեկանորեն զատորոշում են նրան իր բրիտանացի նախորդների պատմահայեցողությունից²:

Թ. Քարլայլի պատմասիրությունը յուրատեսակ մարտահրավեր էր պատմության ռացիոնալիստական ընկալումներին, որոնք պատմությունն ու պատմական գործընթացը տեսանում էին իբրև «անխուսափելի» առաջադիմություն առ լուսավոր[ական]ությունը: Արդ, մերժելով լուսավորական պատմագրության մեկնակետերը՝ Քարլայլը կարճ ժամանակ անց անընդունելի համարեց նաև իմաստասեր-լուսավորյալների պատմության՝ իբրև «օրինակներով ուսուցանող փիլիսոփայության» հայեցակարգը և դրա հիմամբ մարդկային բնության մասին ընդհանրական ճշմարտություններ դուրս բերելու նրանց փորձերը: Դրապաշտական հղացքների ու վերացարկումների փոխարեն, որոնցով «գերհագեցած» էին դարաշրջանի պատմական երկերը, Քարլայլը կոչ էր անում պատմական իրադարձությունների (իրենց բնական ինքնակայությամբ) համակրական (sympathetic) ըմբռնման և պատմության մեջ հավերժական ճշմարտությունների ճանաչման, ճշմարտություններ, որոնց առարկայական խորհրդանիշները պատմական եղելություններն են: Հատկորոշելով «պատմությունն իբրև միակ հնարավոր Էպոս»³՝ Քարլայլը կառուցարկում էր պատմատեսական մի կաղապար, որ հիմնված կլիներ փաստերի ու վկայությունների վրա, բայց և միտված փառաբանելու հերոսական սխրանքները և այդու մեկնելով Աստծո ուղիները մարդկության համար:

Թ. Քարլայլի պատմահայեցողությունը, պատկերավոր ասած, ենթադրում էր մի յուրատեսակ աշխարհիկ ավետարան՝ նպատակավ համադրելու բանաստեղծականն ու փաստականը և վկայելու աշխարհում աստվածայինի իրականության մասին: Պատմության մեջ Քարլայլը հետամուտ էր իմաստայից և արտահայտիչ կառուցակարգի առավել զորեղ երաշխավորի ու ճշմարտության աղբյուրի՝ միաժամանակ փորձառական ու հոգևոր: Յ. Գ. Հերդերից և գերմանացի մյուս ռոմանտիկներից նա փոխ էր առել անցյալի եզականության **խտորիցիստական**⁴ ըմբռնումը և պատմական առաջընթացի փոխհաջորդող շրջափուլերի

Էին հենց պատմագրությանը, երկրորդ՝ պատմությունը «հիմնված է իրականության վրա», երրորդ՝ այն «ինտելեկտի պարզացման ամենամեծ խթանն է»: Անվիճելի է, որ այս նույն դրդապատճառները նաև Քարլայլին էին հակել դեպի պատմությունը (Էջ 33-34):

¹ Տե՛ս Ետադարյան Գ. Ա., Թոմաս Քարլայլը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե., 2020, № 2 (70), էջ 71:

² Տե՛ս Introduction, in *Historical essays*, էջ xix:

³ Տե՛ս *The Collected Letters of Thomas and Jane Welsh Carlyle*. Ed. C. R. Sanders, K. J. Fielding, C. de L. Ryals, Ian Campbell, John Clubbe, Aileen Christianson, Hilary J. Smith, Janetta Taylor, Bill Bell. 46 vols. to date. Durham, N. C.: Duke University Press, 1970 on, 7:24, այսուհետ՝ Letters):

⁴ Ռ. Ուելլեքը Քարլայլի պատմահայեցողության ակունքները տեսնում է խտորիզմի (պատմականություն) կամ օրգանաբանության (organology) դպրոցի համատեքստում: Այս ուղղությունը ծագել էր Անգլիայում ու Շոտլանդիայում 18-րդ դարում և վարձացում ապրել գերմանական դասականության ու ռոմանտիզմի մեջ՝ այնուհետ տարածվելով բովանդակ Եվրոպայով մեկ: Հայեցակարգի հիմնարար հատկորոշիչներն են՝ 1) պատմության մեջ անհատի/անհատականության դերի շեշտադրումը, որի ներքո ենթադրվում է նաև ազգի, դարաշրջանի կամ որևէ այլ հավաքական ուժի բնութագրական ինքնատիպությունը, 2) առաջընթացի հղացքը, որը, սակայն, հույժ տարբեր է առավել վաղ կամ հետագա բնապաշտական (naturalistic), Էվոյուցիոն գաղափարներից և 3) մեթոդի բնույթը, որը պատճառական կամ գիտական չէ՝ միտված ընհանրացումներին կամ օրենքներին, այլ մեկնողական ու ներըմբռնողական (intuitive) է (տե՛ս René Wellek. *Confrontations. Studies in the*

տեսությունը: *Փոփոխության և պատմության պարբերականության* նրա հայեցակարգը հետազայում կրելու էր սենսիմոնականների ազդեցությունը՝ բանաձևելով մարդկության պատմությունն իբրև հերթագայություն հավատի «օրգանական» շրջափուլերի և ռացիոնալիզմի «բննադատական/բեկումնային» դարաշրջանների միջև¹: Սակայն Քարլային մեծապես խորթ էր անցյալը «վերահսկող» համակարգված օրենքների ու շրջափուլերի ընկալումը: Պատմության մեջ փոփոխությունը նա պատկերում է ոչ թե որպես դանդաղ, աստիճանական առաջընթաց, այլ որպես հեղափոխական տեղաշարժերի շարան՝ պատկերավոր արտահայտություն գտնելով **փյունիկ թռչի**² վախճանի ու վերածննդի մեջ, որով էլ անանց և համապարփակ բարոյական իրողությունները մարմին են առնում նոր ձևերի մեջ:

Իր նամակներում, նոթատետրերում, գրառումներում և **«Sartor Resartus»** (1833-1834 թթ.) մտացածին ինքնակենսագրականում 1830-ական թթ. սկզբին Թ. Քարլայը հարձակումներ էր գործում ավանդական պատմագրության դեմ՝ նպատակավոր շունչ հաղորդելու պատմության գիտակարգին՝ իբրև պոեզիայի բարձրագույն ձևի: Նա ընդդիմացավ 19-րդ դարի մատերիալիստական հոսանքներին՝ մերժելով ֆիզիկական տիեզերքը բանական օրենքների ու համակարգերի հանգեցնելու ժամանակի գիտության ճիգերը: Էդինբուրգի համալսարանում մաթեմատիկոսի և գիտնականի նրա կրթությունը զորեղ հոգեբանական ազդակ էր՝ մղելու նրան ընդհանուր եզրեր գտնել իր գեղարվեստական և գիտական հակումների միջև³:

Թ. Քարլայն արմատապես դեմ էր պատմությունը, պատմական գիտելիքը բացառապես գիտական օբյեկտիվության վրա հիմնելուն. նրա համոզմամբ՝ պատմաբանի գլխավոր հանձնառությունն անցյալի իմաստավորումն է: Ուստի բնավ պատահական չէ, որ նա հազվադեպ էր մանրակրկիտ «արխիվային» աշխատանք կատարում և ստուգում իր աղբյուրների հաղորդած վկայությունները⁴: Նա հետամուտ էր պատկերելու ոչ թե պատմական մեծ իրադարձություններն ու ներկայացնելու դրանց համապարփակ վերլուծությունը, այլ այն մասնավորությունների այլաբանական-փոխաբերական մեկնությունները, որոնք ամենից

intellectual and literary relations between Germany, England, and the United States during the nineteenth century. Princeton, New Jersey: Princeton University Press, 1965, էջ 86-87): 20-րդ դարի երկրորդ կեսից Քարլայի պատմասիրությունն իստորիզմի դիրքերից են քննել մի շարք հետապոստդներ (տե՛ս, օրինակ, Rosemary Jann. The Art and Science of Victorian History. Columbus OH: Ohio State University Press, 1985, էջ 38-40 և John Burrow. A Liberal Descent: Victorian Historians and the English Past. Cambridge: Cambridge University Press, 1981, էջ 253-254): Այս սևեռումն ակտիվ է առայսօր: Չ. Բարոուն, սակայն, տողատակում նկատում է, որ Քարլայի պատմատեսության համապարփակ քննության հարցում սենսիմոնական հայացքների ազդեցությունը [ևս] չի կարող պանց առնվել (էջ 254, տողատ. 10):

¹ Մանրամասն տե՛ս Hill Shine. *Carlyle and the Saint-Simonians: the Concept of Historical Periodicity*. New York: Octagon Books, էջ 1-29:

² Փյունիկ թռչունն առանցքային խորհրդանիշ է Թ. Քարլայի մտահայեցողության մեջ: Այն հաճախադեպ է հատկապես «Sartor Resartus» և «Ֆրանսիական հեղափոխությունը. պատմություն» (1837) երկերում՝ հանդես գալով որպես մարդկային հասարակության կենսընթացի շրջափուլային բնույթի խորհրդանիշ: Քարլայն ազդարարում է, որ դեպի ճշմարիտ և իդեալական հասարակություն ապրակն առասպելական փյունիկ թռչի պես երբեք առընդմիջտ չի մեռնում, այլ շարունակ վեր է հառնում իր մոխրից և վերածնվում: Յ. Շայնը հատկանշում է, որ այս խորհրդանիշը Քարլայի երկասիրությունում առաջին անգամ հանդիպում է գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ Ցախարիաս Վերներին (1768-1823 թթ.) նվիրված հոդվածում («Վերների կյանքն ու երկերը», 1828), սակայն դրա փիլիսոփայական իմաստավորման հարցում Քարլայն առավելապես պարտական է Յ. Գ. Յերդերին (տե՛ս Hill Shine. *Carlyle's Early Writings and Herder's "Ideen": The Concept of History, in Booker Memorial Studies*. Chapel Hill: The University of North Carolina Press, 1950, էջ 10, ծնթ. 24; էջ 26-27, ծնթ. 52):

³ Թ. Քարլայի այս մտավոր սևեռումը նկատելի է հատկապես 1830-ական թթ. 1-ին կեսին հեղինակած մի քանի հոդվածներում, այդ թվում՝ ստորև թարգմանաբար ներկայացվող «Դարձեալ ի վերայ պատմութեան» (1833) հոդվածում:

⁴ Այս առումով միանգամայն բնական էր, որ ժամանակի և առավել ուշ շրջանի պատմաբանները կասկածի էին առնում նրա մեթոդաբանությունն ու մեղադրում նրան կեղծարարության մեջ (տե՛ս David R. Sorensen, Brent E. Kinser, Introduction, in Thomas Carlyle. *The French Revolution*. Ed. David R. Sorensen, Brent E. Kinser, and Mark Engel. Oxford: Oxford University Press, 2019, էջ xxx):

համոզիչ կերպով են լույս սփռում անցյալի «բեմադրած» սրբազան սյուժեների վրա: Ավանդական իրադարձային, քաղաքական պատմությունը Քարլայի տեսանկյունից լավագույն դեպքում երկրորդական դեր ունի այդ սյուժեներում:

Թ. Քարլայի՝ որպես պատմաբանի ինքնատիպությունը պատմության և պոեզիայի միահյուսումն էր¹: Նա պարզ կերպով գիտակցում էր, որ պատմական անցյալը ենթարկելով բանականության փորձությանն ու դատին՝ Գիբբոնը, Յյունը և Ռոբերտսոնը թեև պատմությունն ազատագրեցին աստվածաբանական-նպատակաբանական նախապաշարման գերությունից, բայց և, մյուս կողմից էլ, կատարելագործվելով պատմության փիլիսոփայական մեկնության մեջ՝ նրանք «զրկեցին» պատմությունը պոեզիայից: Պատմական եղելույթի երևակայական վերակերտումն անհամեմատ ավելի էական էր Քարլայի պատմասիրության հայեցակարգում, քան պատումի խստորոշ փաստականությունը, քանզի պատմաբանին ու ընթերցողին պատմության առավել խորունկ և հոգևոր իրողությունների հետ կարող են շաղկապել անցյալատեսության լուրջ այն եղանակները, որոնք ստուգությունից կամ ճշգրտությունից անդին են: Այստեղից էլ՝ պատմական անցյալի քննության մերժումն «առավել նեղ, գռեհիկ իմաստով՝ իբրև «դեպքերի» հասարակ ժամանակագրություն, իրողությունների, որոնք, ինչպես ասում ենք, կարող են «պատմվել»»: Չի պատմությունը միմյանց ազդեցված չոր փաստերի լրակազմ չէ, այլ առեղծվածային, անըմբռնելի անցքերի շարան, որոնք հարկ է պատկերել հախուռն և տարերայնորեն, քանի որ պատմությունը միաժամանակ «և՛ պոեզիա է, և՛ մարգարեություն, և՛ կենսագրություն, և՛ սոցիալական քննադատություն. բոլորը՝ մեկում»²:

Թ. Քարլայն ուներ պոեզիայի ինչպես նեղ (պոեզիան իբրև երգ), այնպես էլ հույժ ընդլայն (պոեզիան իբրև մարգարեություն³) ընկալում: Թեև սկզբնապես նա պոեզիան դիտում էր որպես անդրանցական ճշմարտությունների պատկերման արտահայտչամիջոց, սակայն վաղ 1830-ականներից եկավ այն համոզման, որ պոեզիայի բարձրագույն դրսևորումը «իրականության և պատմության ճշմարիտ մեկնության մեջ է»⁴: Այս ըմբռնումի ներիմաստները նա երևան բերեց պատմատեսական իր երկու մանիֆեստներում՝ **«Ի վերայ պատմութեան»** (1830)⁵ և **«Դարձեալ ի վերայ պատմութեան»** (1833):

Պատմատեսական երկրորդ՝ «Դարձեալ ի վերայ պատմութեան» հոդվածում Թ. Քարլայի պատմագիտական ըմբռնումներն առավել ընդլայն համատեքստում են ներկայանում⁶: Այս հոդվածը կարևոր է նաև այն առումով, որ, իբրև այդպիսին, այն պատմության մասին Քարլայի վերջին հայեցական խորհրդածությունն է իր գլխավոր պատմագիտական երկին՝

¹ 1834 թ. օգոստոսի 12-ին Ռ. Ու. Էմերսոնին հղած նամակում Քարլայը գրում էր. «Իմ [խորին] համոզմամբ՝ միակ պոեզիան պատմությունն է, եթե մենք կարողանանք այն ճիշտ պատմել» (Letters, 7:75): Ուշագրավ է բրիտանացի փիլիսոփա, տնտեսագետ Չ. Ս. Միլի (1806-1873 թթ.) դիտարկումն առ այն, որ Քարլայի երկերն իր վրա ազդում էին ոչ թե «իբրև ուսուցանող փիլիսոփայություն, այլ ոգեշնչող պոեզիա» (տե՛ս John Stuart Mill. Autobiography and Literary Essays. Ed. John M. Robson and Jack Stillinger. Toronto: University of Toronto Press, 1981, vol. 1, էջ 182):

² Տե՛ս John D. Rosenberg. Carlyle and the Burden of History. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1985, էջ vii:

³ 1833 թ. աշնանը եղբորը հղած նամակում Քարլայը գրում էր. «Լավ հասկացված մարգարեությունը, այլ ոչ թե պոեզիան է մեզ անհրաժեշտ բանը» (տե՛ս Letters, 7:9):

⁴ Տե՛ս Thomas Carlyle. Essays on Literature. Ed. Fleming McClelland, Brent E. Kinser, and Chris R. Vanden Bossche. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Oakland: University of California Press, 2020, էջ 157 (այսուհետ՝ Essays on Literature): Պատմության և պոեզիայի շաղկապման քարլայյան միտումը թերևս գալիս էր ժան Պոլի՝ իր հերթին փիլիսոփայությանն ու պոեզիայի համադրությունից (տե՛ս René Wellek, նշվ. աշխ., էջ 71):

⁵ Թ. Քարլայի այս հոդվածի հայերեն թարգմանությունը՝ կից առաջաբանով ու մեկնություններով տե՛ս Գ. Ա. Ծաղարյան, Թոմաս Քարլայը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «ՎԷՄ», էջ 55-81:

⁶ Տե՛ս Introduction, in Historical essays, էջ xlii:

«Ֆրանսիական հեղափոխությունը. պատմություն»-ին (1837) ձեռնամուխ լինելուց առաջ¹, ուստի նաև այդ իմաստով այն առավել հասուն ակնարկ է: Քարլայլն աստ ևս չի կտրվել անցյալի աստվածակենտրոն ընկալումներից, բայց և հանգել է տեսական ըմբռնումների՝ ուրվագծելով պատմության ու տեղեկույթի տարածման փոխընթաց կապի գաղափարը, հանգելով պատմական ժամանակի և գրույթի հարաբերականությանը՝ կախված դրանց ընկալման դիտանկյունից, ըմբռնումներ, որոնք իրենց հետագա զարգացումն ստացան 20-րդ դարի պատմագրական մտքում: Արդ, քննության առնենք այդ ակնարկում առաջ քաշված երկու հիմնարար ըմբռնումներ:

«Մարգարեությունն [իբրև] Պատմության մի նոր ձև»: Թ. Քարլայլն ինքը դարաշրջանի մտահոգևոր գիտակցության մեջ ընկալվում էր որպես յուրատեսակ հոգևոր առաջնորդ, աշխարհիկ մարգարե: Պատահական չէր նրա անվիճելի հեղինակությունն իր ժամանակի սոցիալ-քաղաքական բանավեճերում: Ուստի **մարգարեական պատմության** նրա հղացքը մեծապես կապված է նաև Վիկտորյանական Անգլիայի մտավորական միջավայրում գյոթեական իմաստունի նրա համբավի հետ²:

Պատմաբանի մեջ Թ. Քարլայլը համադրում է մարգարեի ու բանաստեղծի դերերը³: Պատմաբան-մարգարեն հանդես է գալիս որպես Աստծո հոսքի մեկնիչ և նրա Կամքի ազդարար, Կամք, որն ի հայտ է եկել պատմական ժամանակի մեջ, իսկ պատմությունը պատկերանում է իբրև ներկայի հետ մարգարեաբար երկխոսող անցյալ⁴: Չի եթե անցյալն ու ներկան սերտորեն փոխկապակցված են, և ներկան էլ անցյալի արգասիքն է, ապա անցյալը կանխագուշակում է ներկան և հանդես գալիս իբրև ապագայի մարգարեական երաշխավոր⁵: Ուստի անհրաժեշտ է մարգարե-պատմաբան, որն ունակ կլինի վերծանելու նրա ուղերձը, պատգամը: Նման պատմությունը հարկ է կարդալ տիպաբանորեն, ինչպես որ Աստվածաշունչը: Իր «Ֆրանսիական հեղափոխությունը»-ում Քարլայլն աստվածայնացնում է պատմությունը՝ դուրս բերելով այն 18-րդ դարի «աշխարհիկությունից» ու ռացիոնալիզմից⁶ և ներկայացնելով իբրև բանաստեղծական մարգարեություն⁷: Ուշագրավ է Ջ. Ռոզենբերգի դիտարկումը. «[...] Արդի վավերագիր-լրագրողի հմտությամբ Քարլայլն [այդ հեղափոխության] մասին գրում է որպես Հայտնության, [Ղատաստանի] ողջ մնացած ականատես»⁸, որպես մի վերջին մարգարե՝ ունակ միաժամանակյա կերպով մտահայելու պատմական փաստերը: Նա կարծես իշխում է ողջ պատումի վրա՝ աստվածաշնչյան մարգարեի և հունական երգչախմբի համահավաք դերը ստանձնելով⁹: Առավել հստակորեն տեսնելով անցյալն ու ներկան՝ պատմաբան-մարգարեի մտապատկերում սկսում է ուրվագծվել ապագան¹⁰:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, էջ xxiv:

³ Այս ընկալումը նկատելի էր արդեն նրա «Նոթատետրեր»-ում (տե՛ս *Two Note Books of Thomas Carlyle, from 23d March 1822 to 16th May 1832. Ed. Charles Eliot Norton. New York: Grolier, 1898, էջ 187, այսուհետ՝ Two Note Books*):

⁴ Տե՛ս Introduction, in *Historical essays*, էջ xxii:

⁵ Տե՛ս Michael K. Goldberg, Introduction, in *Thomas Carlyle. On Heroes, Hero-Worship, and The Heroic in History. Ed. Michael K. Goldberg, Joel J. Brattin, and Mark Engel. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 1993, էջ lxii (այսուհետ՝ On Heroes)*:

⁶ Տե՛ս John D. Rosenberg, նշվ. աշխ., էջ 50:

⁷ Մարգարեական պատմությունը փոփոխական հղացք է Քարլայլի պատմասիրությունում: Գյոթեի ու Շիլլերի ազդեցությամբ նա երբեմն այն բանաձևում է իբրև բանաստեղծական պատմություն (տե՛ս Introduction, in *Historical essays*, էջ xxiv):

⁸ John D. Rosenberg, նշվ. աշխ., էջ 50:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

Հայսմ՝ Թ. Քարլայլի պատկերացրած կատարյալ պատմության գրությունը կարող է կյանքի կոչվել սոսկ մարգարեական պատմաբանի ձեռամբ՝ «[միտված] լույս սփռելու Աստծո մթին ուղիների վրա»¹: Պատմության այս մարգարեական ընկալման հղացքում հարելով գերմանացի ռոմանտիկներին և հատկապես Նովալիսին², Քարլայլն այդուհանդերձ անհաղորդ մնաց պատմական գործընթացի հանդեպ նրանց լավատեսական ըմբռնումներին՝ փոխարենը օժտելով այն հունական ողբերգության ճակատագրականությամբ:

Մարգարեական պատմության միջոցով Թ. Քարլայլի երկերը պատկերագծում են պատմության այնպիսի մի հոլովույթ, որով հաղթահարվում է մարդկության պատմականությունը, և նա դուրս է բերվում անժամանակյա տարածություն, մի ավետյաց երկիր, ուր ավարտվում է պատմությունը և սկսվում իդեալական հասարակությունը³: Պատմության այս ուտոպիական ընկալումը հարկավ բնորոշ էր ժամանակի այլ մտածողների ևս՝ Չ. Ս. Միլից մինչև Մարքս⁴:

Այսպիսով, մարգարեության քարլայլյան սահմանումը կարելի է ագուցել «պատմության հուղայաքրիստոնեական գաղափարին», որում «անցյալը ապագայի խոստումն է, [և] հետևաբար անցյալի մեկնությունը վերաճում է հակընթաց մարգարեության (prophecy in reverse)՝ անցյալը ներկայացնելով իբրև ապագայի իմաստալից նախապատրաստում»⁵: Արդ, Թ. Քարլայլի պատմահայեցողությունը դիտվում է որպես հինուխտյան պատմական դրամայի և գերմանական իդեալիստական փիլիսոփայության մի արտառոց խառնուրդ, որում պաշտամունքի և հատուցման (retribution) հուղայաքրիստոնեական մտակաղապարը համադրվում է հոգու և նյութի առչությունների վերաբերյալ դարաշրջանի գերմանական իմաստասիրական հայեցակարգերին⁶: Իսկ անցյալի աղոտ վկայություններից պատմական ճշմարտությունը վերականգնելու պատմաբանի ձգտումը զուգամիտվում է քառսից կարգ ստանալու արարչագործական ակտին:

Թ. Քարլայլի առաջադրած մեկ այլ ուշագրավ հղացք է պատմության «խտացումը»: Պատմական փաստերի անսահման համալիրում յուրաքանչյուր պատմաբան, որի ունակություններն ու միջոցները սահմանափակ են, պետք է հետամուտ լինի այդ փաստերի և իրողությունների խտացված, հակիրճ ներկայացմանը⁷: Ուստի Քարլայլը շարունակ շեշտում է *Մոռսգման* կարևորությունը պատմության գրության մեջ: Իր «Օլիվեր Զրոմվելի Նամակներն ու ճառերը» գրքի (1845) առաջաբանում նա պնդում է, որ պատմաբանը սրբազան բանաստեղծ է դառնում ինչպես «իմաստուն մոռացմամբ», այնպես էլ «իմաստուն հիշողությամբ»⁸, որոնց գոյությունը փոխապայմանավորված է միմյանցով: Պատմությունը չի կարող գրվել առանց փաստերի ու իրադարձությունների ընտրողական ներկայացման, և պատմաբանն ուղղակիորեն ստիպված է «ընտրասերման» միջոցով զատորոշել էականը ոչ էականից: Հետևաբար դեպքերի արձանագրումը պահանջում է պատմաբանի նշմարող, սրատես աչք՝ ունակ զանազանելու դրանք: Մյուս կողմից՝ «պատմությունն ինքնասեղմվում է ընթեռնելիության աստիճանի», և փաստորեն խտացման այս «գործողությունը» նաև ինքնաբերական և ինքնընթաց է, «քանզի մանրուք մանրուքի հետևից, մարդկանց կենդանի գործունեությունից անհետանալուն զուգընթաց, զատվում են նրանց խոսքից ու հիշողությունից, և մեծն ու կենսականը ավելի ու ավելի բացառաբար են կենում այնտեղ»:

¹ *St'u The Works of Thomas Carlyle, ed. H. D. Traill, Centenary Edition, 30 vols. London: Chapman and Hall, 1896-1899. History of Friedrich II of Prussia, Called Frederick the Great. 8 vols., 12:19:*

² *St'u Charles F. Harrold. Carlyle and German thought: 1819-1834. Hamden • London: Archon Books, 1963, էջ 177:*

³ *St'u Introduction, in Historical essays, էջ xxiii:*

⁴ *St'u նույն տեղում:*

⁵ *St'u Karl Löwith. Meaning in History. Chicago: University of Chicago Press, 1949, էջ 6:*

⁶ *St'u John Burrow, նշվ. աշխ., էջ 252-253:*

⁷ *St'u Hill Shine, նշվ. աշխ., էջ 23:*

⁸ *St'u The Works of Thomas Carlyle, ed. H. D. Traill, Centenary Edition, 30 vols. London: Chapman and Hall, 1896-1899. Oliver Cromwell's Letters and Speeches with Elucidations. 4 vols., 6:8:*

Թ. Քարլայի համոզմամբ՝ վնասակար է պատմության ինչպես «գերլիություն»-ը կամ «հավելություն»-ը, այնպես էլ դրա «սակավություն»-ը: Սրանով էր պայմանավորված նաև ժամանակի պատմագրության նրա քննադատությունը, քանզի ամեն տեսակի պատմական անցուդարձերի արձանագրման և ներկայացման պարագային պատմաբանն արդեն վերածվում է լրագրողի, որը գրի է առնում ամեն ինչ՝ առանց ընտրության ու տարբերակման¹:

Պատմության խտացման այս հղացքը թույլ է տալիս ճիշտ հասկանալ և իմաստավորել պատմությունը՝ նպատակավոր ցուցանելու ներկայի համար անցյալի **արգասավորությունը**²՝ հիմնված անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական զգացումի վրա: Հատկանշական է նաև դրա արժեքանությունը³: Ըստ Թ. Քարլայի՝ պատմության դատաստանով փորձված դեպքերն ու իրողություններն անկորնչելի են⁴, և որքան ճշմարիտ ու «բեղուն» է պատմական եղելույթը, այնքան հավանական է, որ այն կհիշվի, զի «մարդիկ շարունակ խոսում են լոկ այն մասին, ինչ գոյություն ունի և եռանդագին գործում է նրանց կողքին»:

Այսպիսով, մինչդեռ դարաշրջանի վերջալույսին արհեստավարժ պատմաբաններն ավելի ու ավելի էին ջանում խարանել «գրական» պատմությունը՝ համարելով այն խաբեություն կամ կեղծարարություն, Թ. Քարլայի պատմական երկերն աննախընթաց ազդանիշ էին՝ ցույց տալու անցյալի երևակայական վերակերտման թեր և դեմ կողմերը: Գրույթի նրա ոճի և մեթոդաբանության բացառիկությունը կասկած էր հարուցում առ այն, որ գրական պատմության սկզբունքներով հղացված երկերը պատմական տեղեկույթի ճշգրտության ու հիմնավորության պակասով կմոլորեցնեն ընթերցողին: Սակայն պատկերը միանգամայն այլ էր. Քարլայի էապես այլաբանական երևակայությունն ու անցյալատեսությունը լիովին այլ նշանոց սահմանեցին մարդկության պատմական փորձառության ուսումնասիրության հարցում՝ **յուրօրինակ խթան հաղորդելով հետագա պատմագիտական մտքի կայացմանը**:

¹ Լրագրողի և պատմաբանի միջև այս սուղահեռը հանդիպում է Քարլայի «Ի վերայ պատմութեան» հոդվածում (տե՛ս Գ. Ա. Ճաղարյան, Թոմաս Քարլայը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «ՎԷՄ», էջ 73-74):

² Իր այս ընկալմամբ Քարլայը ֆոն Ռանկեի ուղղակի հակադրությունն էր, քանզի վերջինիս համար մեկնակետ էր ծառայում այն ըմբռնումը, որ յուրաքանչյուր դարաշրջան արժանի է քննության ըստիևքյան, այլ ոչ նրա համար, թե ինչ նպաստ այն կարող է բերել ներկային: Այս հարցում Քարլայը համերաշխ էր 18-րդ դարի պատմական եռյակի (Գիբբոն, Յոուն, Ռոբերտսոն) հետ՝ մերժելով «պատմություն հանուն պատմության» բանաձևը (տե՛ս Charles F. Harrold, նշվ. աշխ., էջ 153)՝ դիտելով այն որպես *magistra vitae*, քանզի արժեքավոր է լոկ այն պատմությունը, որը «մտահոգ» է մարդկության ներկայիս հարցերով (տե՛ս René Wellek, նշվ. աշխ., էջ 105):

³ Արժեքանական այս ընկալումը կարելի է համեմատել Շիլլերի այն հղացքի հետ, համաձայն որի՝ մարդկային գործերն ու սխրանքները իրավունք են վաստակում տեղ գտնելու համաշխարհային պատմության հորձանուտում և արժանի լինելու հիշատակման (տե՛ս Louise M. Young, նշվ. աշխ., էջ 36):

⁴ Տե՛ս Charles F. Harrold, նշվ. աշխ., էջ 176:

**ԹՈՄԱՍ ԶԱՐԱՅԼ
ԴԱՐՁԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ¹ (1833)²**

[Պատմության մասին հետևյալ եզակի պատառիկը մաս է կազմում, ինչպես կարելի է նկատել, մեր փոլթաջան «Դ. Թ.»-ի³ Ներածական ճառի՝ *Տարրական ավելություն տարածման ընկերության*⁴ բացման առթիվ: ճառը, եթե հավատ ընծայենք առավոտյան լրագրերին, «ամենահրաշալի կերպով, բարոյախրատաբար, բանաստեղծորեն, գրեթե մարգարեաբար շոշափեց այս և մյուս աշխարհի բոլոր իրողությունները՝ անդուլ կամ, ավելի շուտ, զուսպ, կրակոտ պերճախոսության ոգով, որ հազվադեպ է հանդիպում պառլամենտում կամ դրա-

¹ Թարգմանությունը՝ ըստ *Historical Essays*, էջ 15-22: Անհրաժեշտ ենք համարում նկատել հետևյալը. Զարլայլի երկերում գլխավորապես գերմաներենի ապրեցությանը, իսկ որոշ դեպքերում նաև առանձնակի շեշտադրության համար հասարակ գոյականները հաճախ մեծատառով են գրված: Երկերի գիտաքննական հրատարակության խմբագրակազմը մեծատառ գրություններն անփոփոխ է թողել՝ ելնելով սեփական երկերի խմբագրման/լրամշակման հարցում հեղինակի գործուն մասնակցությունից: Տվյալ դեպքում Զարլայլը հանգամանորեն խմբագրել/սրբագրել է (ևրա մասնակցության մեզ հայտնի վերջին հավաստի վկայությունը) *Miscellanies*-ի 1840 թ. (երկրորդ) լուրջյան հրատարակությունը, որում տեղ է գտել նաև սույն հոդվածը: Ուստիև քննական հրատարակության խմբագիրը պահպանել է գրության այն բոլոր ձևերը, որոնք հաստատապես հեղինակին են և ոչ գրաշարինը: Այդուհանդերձ, մենք պահպանել ենք մեծատառ գրության լույ այն դեպքերը, որոնք ոչ թե կամ ոչ այնքան գերմաներենի ապրեցությունը, որքան որ [բառի, արտահայտության] առանձնակի շեշտադրությունն են ցուցանում: Նույնը վերաբերում է նաև մեկնություններում հեղինակի այլ գրվածքների արված հղումներին ու վուզահեռներին: Տարբեր հրատարակություններում հոդվածի տեքստի հաստատության և համեմատության, ինչպես նաև հենց քննական հրատարակությունում խմբագրական որոշումների (մեծատառ/փոքրատառ, շեղատառ գրությունների պահպանում, ուղղագրական, կետադրական հարցեր ևն) մասին տե՛ս *Historical Essays*, էջ 813-814, 897-899, 923, 953-955:

Երկու խոսք թարգմանության մասին: Զարլայլի անգլերեն ինքնին առանձին հետապոսական թեմա է: Նրա արձակի շարահյուսությունն ու ոճը երևույթ են նշանավորում Վիկտորյանական դարաշրջանի գրականության մեջ: Բացառիկ է դեռևս 1971 թ. Ուոբերտ Լի Օքսենի «Շարահյուսությունը Թոմաս Զարլայլի արձակ ոճում. քանակային, լեզվաբանական վերլուծություն» մենագրությունը: Այստեղ Օքսենը հեղինակի լիակատար երկերից ընտրել է շուրջ 200 անկանոն, պատահական պարբերություններ և, կիրառելով համակարգչային/հաշվողական (computational) շարահյուսական վերլուծությունը, հատկանշել Զարլայլի շարահյուսական կառույցների՝ ոճաբանորեն էական ու ինքնատիպ տարրերը: Հետևաբար թարգմանության մեջ մենք ըստ կարելիության փոխանցել և պահպանել ենք հեղինակային կառույցները: Առանձին դեպքերում՝ նաև կետադրական ինչ-ինչ առանձնահատկություններ:

² Սույն հոդվածն առաջին անգամ լույս է տեսել «Fraser's Magazine» 7, no. 41-ում (էջ. 585-589 // 1833, մայիս) «Quæ Cogitavit» («Նրա մտքերը») խորագրով: Իսկ արդեն «On Hisory Again» («Դարձեալ ի վերայ պատմութեան») վերնագրով այն ներառվել է *Critical and Miscellaneous Essays*-ի՝ հեղինակի կենդանության օրոք լույս տեսած բոլոր հրատարակություններում (1838, 1840, 1847, 1857, 1869, 1872):

³ Թ. Զարլայլը հաճախակի էր գործածում ինքնահնար խմբագիրների և անձանց անուններ, ինչպես օրինակ՝ Դ. Թ.-ի և Օլիվեր Յորթի (տե՛ս 44-րդ ձևը.): Գրական այս հնարքից նա օգտվելու էր նաև իր «Պատահական ճառ Նեգրական հարցի շուրջ» (1849) հոդված-պարսավագրում: Դիոգենես Թոյֆելսդորթը (Դ. Թ.) Զարլայլի «Sartor Resartus» վեպում հազուստի փիլիսոփայության մտացածին հեղինակն է: Սույն հոդվածը տպագրության հանձնելիս Զարլայլն արդեն ավարտել էր իր վեպը, սակայն «Fraser's Magazine»-ում այն սկսեց մաս-մաս հրատարակվել 1833 թ. նոյեմբերից: Իսկ մեկ տարի առաջ՝ 1832 թ., «Դ. Թ.»-ն հանդես էր եկել որպես Գյոթեի «Հեքիաթը»-ի («Das Märchen», 1794-1795) թարգմանիչ ու ծանոթագրող՝ կրկին նույն հանդեսում հրատարակված: // Այստեղ և հաջորդիվ որոշ մեկնություններ Զարլայլի արձակի հղացական/ակնարկային ոճի բացահայտումներն են քննական հրատարակության խմբագիր Զրիս Ռ. Վանդեն Բոսսեի կողմից:

⁴ Ծարրանմանություն է 1826 թ. Լոնդոնում հիմնված «Օգտակար գիտելիքի տարածման ընկերությանը»՝ 19-րդ դարի ամենահավակնոտ կրթական նախածեռնություններից մեկը, որ «գիտական» և «օգտակար» գիտելիքի վերաբերյալ աշխարհիկ բովանդակությամբ գրքերի ու պարբերականների տարածմամբ հետամուտ էր գիտության ու քաղաքակրթության մասին արևմտյան գաղափարներն ու ընկալումները սերմանելու ոչ միայն Բրիտանական կղզիներում, այլև բովանդակ Բրիտանական կայսրությանը և աշխարհով մեկ: Ընկերությունը գործում էր իբրև ոչառևտրային հրատարակչատուն, և քանի որ բարձրագույն կրթությունն ու թանկարժեք գիտական գրականությունը ֆինանսապես հասանելի չէին շատերին, այն հրատարակում էր գրքերն այնպիսի ձևաչափով ու լեզվով, որ մատչելի էին ընթերցող լայն շրջաններին և ոչմասնագետներին: Ընկերության գործունեությունը դադարել է 1848 թ.:

ևից դուրս: Գլխավոր պոռթկումներն ընդունվեցին խորին լռությամբ»՝ ընդհատվելով, վախենալով թե, քթախոտ քաշելով: Ինչպես կտեսնեք, սա այդ բարոյախրատական հատվածներից մեկն է, որ մենք գետեղում ենք այստեղ: Այս հանդեսի խմբագիրը պատասխանատու է դրա ստուգության համար և հրատարակում է եթե ոչ հրաժեշտ տալով, ապա հրաժեշտ առնելով: – Օ. Յ.^{1]}

*** ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ² ներկայանում է իբրև բոլոր գիտություններից ամենաօգտավետը և, հիրավի, այնպիսի մի եակի համար, որպիսին մարդն է, որ ծնվում է և պետք է սովորի ու աշխատի և ապա որոշ ժամկետից հետո հեռանա՝ թողնելով սերունդներ ու գործեր, և հայսմ բոլոր եղանակներով հավաստի իրեն որպես մարդկության կենսական մասնիկ, ոչ մի [այն] գիտություն չի կարող առավել հարիր լինել: Պատմությունը Կտակ է, որ հին սերունդները գրում են և ավանդում նորին: Ավելին, առավել ընդհանրաբար այն կարելի է կոչել Ուղերձ՝ բանավոր կամ գրավոր, որ հանուր մարդկությունը հղում է յուրաքանչյուր մարդու. այն միակ **հողաբաշխ**³ հաղորդակցությունն է (մինչդեռ անհողաբաշխն ու մունջը՝ դյուրըմբռնելի կամ ոչ, մեր շուրջը և մեր մեջ են՝ այնքան արտասովոր կերպով մեր գոյության յուրաքանչյուր նրբաթելի, մեր գործունեության ամեն մի քայլափոխի միջոցով), որ Անցյալը կարող է ունենալ Ներկայի հետ, Հեռական՝ Աստենականի: Բոլոր գրքերը, հետևաբար, լինեն դրանք լոկ տաղարաններ կամ քննախոսություններ մաթեմատիկայի մասին, վերջիվերջո պատմական վավերագրեր են, – ինչպես որ հիրավի բովանդակ խոսքն ինքնին: Ուստի կարող ենք ասել, որ Պատմությունը ոչ միայն ամենահարիր, այլև միակ գիտությունն է և պարառում է մնացյալ բոլորը: Կատարյալ պատմաբանը՝ նա, որը ներթուստ հասկանար և տեսներ ու իմանար այն ամենը, ինչ Ադամի ողջ զարմը⁴ ցարդ **եղել** էր ու **արել**, կատարյալ կլիներ գոյություն ունեցող կամ հնարավոր բոլոր գիտություններում. հետայսու կարիք չուներ այլևս **ուսանելու**, և այսուհետ ոչինչ չէր մնում նրան, քան ինքնին **լինել** ու **անել** ինչ-որ բան, որպեսզի մյուսները գորեին Պատմություն կերտել այդ բանից և սովորեին **նրանից**:

Քաջ հայտնի է, որ ոչ մի տեսակի կատարելություն վիճակված չէ մարդուն, սակայն գերբնական բոլոր կատարյալ կերպարներից այս կատարյալ պատմաբանը (նաև այդքան դյուրըմբռնելի) թերևս ամենից հիասքանչը կլիներ: Ավներևաբար անթերի մի հրեշ, որին աշխարհը չպետք է տեսնի, անգամ՝ թղթի վրա: Մի՞թե [այդ] Թափառական հրեան⁵ իսկապես

¹ Ուղղանկյուն փակագծերում բերված այս նախաբան-մուտքը ենթադրաբար հեղինակել է «Օլիվեր Յորք»-ը (Օ. Յ.), կեղծանուն, որն օգտագործում էր լրագրող Ուիլյամ Մեգինն (1794-1842) իբրև «Fraser's Magazine»-ի խմբագիր: Սակայն էլնելով այն հանգամանքից, որ Քարլայը պահպանել էր այս նախաբանը Miscellanies-ի հնգահատոր հրատարակությունում, ապա ամենայն հավանականությամբ հենց նա էլ գրել էր այն: «Sartor Resartus»-ի հերոսներից խմբագիրն (The Editor) իր խոսքում երկիցս հիշատակում է Օլիվեր Յորքին (տե՛ս Thomas Carlyle. Sartor Resartus. Ed. Rodger Tarr and Mark Engel. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley: University of California Press, 2000, էջ 10, 218, այսուհետ՝ Sartor Resartus): Գյոթեի «Հեքիաթը»-ի Քարլայի թարգմանությունը (1832 թ. հոկտեմբեր) ևս լույս էր տեսել «Օ. Յ.»-ի ընդարձակ առաջաբանով ու տողատակի ծանոթագրություններով (տե՛ս The Works of Thomas Carlyle, ed. H. D. Traill, Centenary Edition, 30 vols. London: Chapman and Hall, 1896-1899. Critical and Miscellaneous Essays. 5 vols., 2:447-54 ff., այսուհետ՝ Miscellanies):

² Այստեղ և հաջորդիվ ամբողջական բառի գլխատառ գրությունը հեղինակինն է:

³ Այստեղ և հաջորդիվ շեղատառ գրությունները հեղինակինն են: Ավելի տեսանելի դարձնելու համար մենք նաև թավատառ ենք դարձրել:

⁴ Ավնարկ է մարդկությանը, մարդկային ցեղին:

⁵ Համաձայն տարբեր ավանդությունների՝ այս կերպարը երբեմն նույնացվում է հինուխտյան Ախաշվերոշի հետ: Կերպարի մասին դարեր շարունակ մի շարք առասպելներ են շրջանառվել, որոնցից շատերը խոսում են Քրիստոսի ժամանակներում ապրած մի անձից, որը Քրիստոսի խաչելության ճանապարհին մերժել կամ անարգել էր նրան և դատապարտվել թափառելու մինչև Դատաստանի օրը կամ էլ կարող էր փրկություն գտնել ապաշխարությամբ (տե՛ս Joseph Gaer. The Legend of the Wandering Jew. New York: Mentor, 1961, էջ viii): Առասպելի առաջին գրավոր հիշատակությունը հանդիպում է 13-րդ դարի անգլիացի ժամանակագիր Ռոջեր Վենդովերցու (մահ. 1236 թ.) երկում: Առասպելի մոտիվը տարբեր մշակումներով հայտնի էր հատկապես ռոմանտիկների շրջանում. Գյոթեն օգտվել էր դրանից Վիլիելմ Մայսթերի մասին իր վիպաշարում, Ու.

սկսել էր հաճել եղեմում և [դեռ] Ֆորտունատուսի գրական¹ էլ գլխին: Նանակ շահը² ևս, [ինչ-պես] հիշում ենք, երեք օր ընկղմվել էր ինչ-որ սրբազան Ջրհորի մեջ և բավական բան իմացել այնտեղ: Նանակի մեթոդը շատ ավելի դյուրին էր, բայց ցավոք անիրագործելի՝ այս կլիմայում: Քննեցեք, սակայն, թե այս կատարյալ Նանակից անչափելի ի՞նչ հեռավորության վրա են ձեր վեհագույն, անկատար գիբբոնները³ խաղում իրենց դերը: Դու կարծում ես, թե Ազամեմնոնից⁴ առաջ քաջարի մարդիկ չկայի՞ն: Թրակիական Բոսփորից⁵ անդին ամեն

Ուորդսվորթը՝ «The Excursion»-ում (1814), Ս. Բորիջը՝ «The Ancient Mariner»-ում (1798) և Փ. Բ. Շելլին՝ «Queen Mab»-ում (1813): Քարլայն այս կերպարին անդրադառնում է «Sartor Resartus»-ում (Էջ 14), իսկ իր նամակագրության մեջ իրեն փոխաբերաբար հաճախ նույնացնում էր Թափառական հրեայի հետ (Letters, 3:113, 7:170 ևն):

¹ «Ֆորտունատուսի գրակ»-ը հաճախադեպ խորհրդանշան է Քարլայնի մտահայեցողության մեջ՝ բնորոշելու անդրանցական գիտակցությունը և դրա միջոցով ժամանակի ու տարածության սահմանների հաղթահարումը: Ըստ ավանդության՝ Ֆորտունատուսը ճակատագրից (Fortune) կախարդական գլխարկ էր ստացել, որը կտեղափոխեր նրան իր ուզած վայրը: Ակնհայտ եվրոպական ծագմամբ այս ավանդապատումն անգլերենով առաջին անգամ հայտնի է դարձել 16-րդ դարում: Ավանդապոսիցի հիմամբ պիեսներ են հեղինակել գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ Յանս Սաքսը (1494-1576), երիտասերության դարաշրջանի անգլիացի թատերագիր Թոմաս Դեբբերը (1572-1632) և այլք (տե՛ս Charles Frederick Harrold, ed. Sartor Resartus, by Thomas Carlyle. New York: Odyssey, 1937, էջ 159 n; Նաև՝ Sartor Resartus, էջ 117, 191):

² Գուրու Նանակ, Նաև՝ Յայր Նանակ (1469-1539), հնդիկ հոգևոր ուսուցիչ, սիբիական կրոնի հիմնադիրը, սիբիերի (մենաստվածային կրոնական խումբ, որ համարում էր հինդուիզմի և իսլամի ազդեցությունները) առաջին գուրուն: Քարլայնը հղում է 29 տարեկանում Նանակի վերապրած միստիկական պայծառացմանը, երբ վերջինս գետում լողալիս հանկարծ ջրասուկվել էր և երեք օր այդպես մնացել: Ըստ ավանդապոսիցի՝ Նանակն այդ ընթացքում Աստծո ներկայության մեջ էր և Նրանից առաքելություն էր ստացել շարունակ կրկնելու Աստծո անունը ու [փառաբանելու] Նրան՝ սյունների ևս հորդորելով այդպես վարվել (տե՛ս Joan A. Price. Sacred Scriptures of the World Religions: An Introduction. New York: Continuum, 2010, էջ 92):

³ Էդվարդ Գիբբոն (1737-1794), անգլիացի պատմաբան, պատմագրության մեջ ռացիոնալիզմի ուղղության երևելի դեմքերից, որ գլխավորապես հայտնի է իր «Հռոմեական կայսրության անկման ու խորտակման պատմությունը» վեցհատորյա աշխատությանը (1776-1788): Լուսավորականության մտքի այս կրթողային փաստաթուղթը ցնցող ազդեցություն է գործել Քարլայնի վրա, երբ նա առաջին անգամ կարդաց այն ուշ 1817 – վաղ 1818 թթ. (տե՛ս Fred Kaplan. Thomas Carlyle: A Biography. Ithaca: Cornell University Press, 1983, էջ 48-49, 51): Հետագա տարիներին Գիբբոնի իր ընթերցումը Քարլայնը ներկայացնում էր իբրև նշանակալից իրադարձություն իր կյանքում՝ պնդելով, թե նա «կարդաց Գիբբոն և այդժամ առաջին անգամ պարզորոշ տեսավ, որ քրիստոնեությունը ճշմարիտ չէ» (տե՛ս William Allingham's Diary. 1907. Reprint, Carbondale: Southern Illinois University Press, 1967, էջ 232): Իր ընկերոջը՝ գրաբնասառ, պատմաբան Դեյվիդ Մետոնին (1822-1907) Քարլայնը խոստովանել էր, որ «Գիբբոնի այդ անմոռանալի առաջին ընթերցումը 12 օրում՝ օրական մեկ հատոր, նրա մտքից արմատախիլ արեց իրաջենների հանդեպ ուղղադավան հավատի վերջին մնացորդը» (տե՛ս David Masson. Edinburgh Sketches and Memories. London: Black, 1892, էջ 263-264): Այդուհանդերձ, Գիբբոնի մասին վաղ շրջանի իր դատողություններում Քարլայնը դեռևս չէր «խոստովանում», որ հավատի հարցում իր հոգևոր ճգնաժամը Գիբբոնի ընթերցումից էր ծագել. «Փոխնիփոխ հիացած ու սրդողած այն վառ գունավորմամբ, որով նրա երևակայությունն օժտում է իր պատումի անմշակ և սուղ նյութը, երբեմն վիատված նրա տեղեկությունների ուսումնասիրությունից, երբեմն էլ վարմացած դրանց կենդանությամբ ու հաճախ էլ խորշելով դրանց անպատշաճությունից և հիանալով կամ ափսոսանք զգալով նրա ճարտար հեզանքի դառնությունից՝ ես տքնանքով և օրինակելի համբերությամբ հաղթահարեցի նրա սուվար հատորները: Նրա ոճը հաճախ այնքան վերամբարձ է, հանդիսավոր և հասու, որ [անգամ] տհաճ է: Նա սիջում է Յյունի նրբագեղությամբ ու հստակությամբ, իսկ Ռոբերտսոնին՝ մանրաբնիկ հետապոտության ձիրքով, սակայն գերազանցում է երկուսին էլ սեղմ ու դիպուկ դիտողությամբ, որում կարծես իբրև օրինակ է վերցնում Տակիտոսին: [...] Այս ողջ պատմական եռյակը համակ պուրկ է առաքինի զգացումից և կամ նույնիսկ որևէ զգացումից առհասարակ (Letters, 1:120-21; տե՛ս նաև 1:266, 314): Քարլայնի նամակակնում առ Գիբբոն հղումները բավական հաճախադեպ են 1818-1824 թթ., այնուհետ՝ հապվադեպ: Գիբբոնի երկի Քարլայնի օրինակը վաճառվել է Սոթբիի աճուրդում 1932 թ. (տե՛ս Sotheby and Co. Catalogue of Printed Books, Autograph Letters, Literary Manuscripts... Formerly the Property of Thomas Carlyle, 1795-1881. London: Sotheby, 1932, էջ 10, այնուհետ՝ Sotheby): Քարլայնի պատմահայեցողության վրա Գիբբոնի ազդեցության և նրանց հայացքների գուլգարական քննության համար տե՛ս David Sorensen. Carlyle, Gibbon, and the 'Miraculous Thing' of History, in Carlyle Annual 12 (1991), էջ 33-43:

⁴ Միկենքի արքան և հույների առաջնորդը Տրոյական պատերազմում:

⁵ Թրակիական Բոսփորը Եվրոպական Թուրքիան պատում է Ասիական Թուրքիայից, ուստի Քարլայնն այստեղ մատնանշում է Հունաստանից արևելք ընկած տարածաշրջանը:

ինչ մեռյալ էր ու դատարկ: Յորն հրվանդանից մինչև Նոր Երկիր¹, բովանդակ բնակելի երկրագնդի չորսդրին մի՞թե ոչ մի մուկ չէր շարժվում²: Կամ, դարձյալ, ժամանակի վերաբերմամբ. – Աշխարհի արարումը հիրավի հին է՝ ի համեմատ Առաջին տարվա. բայց և Նոր է երեկվանից՝ ի համեմատ Հավերժության: Ավադ, ողջ Համաշխարհային պատմությունը³ լոկ մի տեսակ ծխական պատմություն է, որը «Փ. Փ.-ն՝ ծխական դպիրը», որ անդամակցում է «մեր Գարեջրատան ակումբ»-ին⁴ (հիմնադրված «սաղմուսերգության» համար, որը պահանջարկ է վայելում անդ), այնպես է ի մի բերում, որ դրա անդամակիցները գովերգեն այն: Որքա՞ն շատ գիտենք մենք Անցյալ կոչվող այն **բանից**, որն այժմ մուկն է և որը երբեմնի Ներկա էր ու բավական ձայնել: Մեր «Կտակ»-ը մեզ է հասնում ամենախղճուկ վիճակում՝ նենգափոխված, ջնջված, պատառոտված, կորույայ, որից գեթ մի պատառիկ է մնացել, ինչը ևս հույժ խրթին է՝ ընթեռնելու կամ վերծանելու համար:

Միևնույն ժամանակ, Կտակի մեր [այդ] պատառիկը, մեր գրավոր կամ բանավոր Ուղերձը, ինչ [վիճակով էլ] որ այն մեզ է հասել, անասելի թանկ է: Միմիայն նա, ով հասկանում է, թե ինչ է եղել, կարող է իմանալ՝ ինչ պետք է լինի և ինչ կլինի: Չափազանց կարևոր է, որ մարդը պարզի ամբողջի հետ իր հարաբերությունը: Ինչպես գրված է՝ «[անհատ] մարդն անգոր է», և «միայն նա է [գորեղ], ով պատեհ ժամին միավորվում է շատերի հետ»⁵: Որքա՞ն

¹ Յորն հրվանդանից (Հարավային Ամերիկայի հարավային ծայրակետը) Նոր Երկիր (Ռուսաստանի հյուսիսային ծովկերթին) ընկած տարածաշրջանը կրկնգրկի փաստացի ողջ երկրագունդը: Միով բանիվ՝ Քարլայլը հարց է առաջադրում, թե արդյոք պատմությունը պետք է եվրոպական մայրցամաքից անդին ձգվի:

² Հմմտ.՝ Ու. Շեքսպիր, Հավետ 1.1.12. “Not a mouse stirring” (Ֆրանցիսկոն՝ Բեռնարդյին):

³ «Համընդհանուր/Համաշխարհային պատմություն» եպոյթը տևական ժամանակ էր, ինչ գործածության մեջ էր՝ մատնանշելու աշխարհի պատմությունն սկզբից մինչև ներկա ժամանակը, օր.՝ ժակ Բոյոլեի (1627-1704) «Ըննախոսություն համընդհանուր պատմության մասին» (1681) և Յոհաննես Սյուլլերի (1752-1809) «Բասնչորս գիրք հատկապես Եվրոպայի մարդկության ընդհանուր պատմության [մասին]» երկերը (1810), որոնք երկուսն էլ Քարլայլը գիտեր: Սակայն գրեթե կասկած չկա, որ նա այստեղ ակնարկում է 18-րդ դարավերջի պանական փորձերը՝ համայն մարդկության պատմությունն ի մի բերելու մի համապարփակ կառույցի սահմաններում՝ ենթադրելով աճի ու կարգացման կուռ, միասնական գործընթաց: Այսօրինակ պատմությունները մարդկության պատմությունը հաճախ դիտում են իբրև մեկ առանձին անհատի պատմություն, որն ապրում է հարատև և սովորում հանապապ: Քարլայլն այստեղ կարող էր մտքում ունենալ նաև Յենայի համալսարանում պատմության պրոֆեսորություն ստանձնած Ֆ. Շիլլերի ներածական բանախոսությունը՝ «Ի՞նչ է համընդհանուր պատմությունը, և ի՞նչ նպատակով են այն ուսումնասիրում» (1790), որը նա մեկնաբանել էր այսպես. «Եվրոպայում թերևս երբևէ չի եղել պատմության մեկ այլ դասընթաց, որ հղացված լիներ այսբան հոյակապ ու փիլիսոփայական սկզբունքների հիմամբ» (տե՛ս Thomas Carlyle. *The Life of Friedrich Schiller: Comprehending an Examination of His Works*. London: print. for Taylor and Hessey, 1825, էջ 99, այսուհետ՝ *Life of Schiller*): Շիլլերի պատմահայեցողությունն իր հերթին խորապես ազդված էր Կանտից, որը պաշտպանում էր «համընդհանուր պատմության» հղացքը հապացույց այն բանի, թե մարդկությունն աստիճանաբար ավելի ու ավելի բանական է դառնում: «Յերոսների, հերոսապաշտության և պատմության մեջ հերոսականի մասին» գրքում (1841) Քարլայլը շարունակելու էր սատար լինել «համընդհանուր պատմության» գաղափարին. «Յերոսների պաշտամունքը և հերոսականը մարդկային գործերում: Յույժ ակներև է, որ սա ծավալուն թեմա է, որ միանգամայն այլ մեկնության է արժանի, քան կարող ենք այժմ ակնկալել, ծավալուն թեմա, հիրավի անսպառ, ինչպես որ ինքնին Համաշխարհային պատմությունը: Բանկի, ըստ իս, Համաշխարհային պատմությունը՝ աշխարհիս վրա մարդու կատարած գործերի պատմությունը, ըստ էության Մեծն մարդկանց պատմությունն է, որոնք գործել են այստեղ» (տե՛ս *On Heroes*, էջ 3):

⁴ Քարլայլն աստ հղում է անգլիացի բանաստեղծ Ալեքսանդր Փոուլիի (1688-1744) «Memoirs of P. P.: Clerk of this Parish» (1727) երկին (հավանաբար բանաստեղծ, դրամատուրգ Չոն Գեյի (1685-1732) համահեղինակությամբ), որ երգծում է շոտլանդացի փիլիսոփա և պատմաբան, Սոլսբերիի եպիսկոպոս Գիլբերթ Բարնեթի (1643-1715) «Իմ ժամանակի պատմությունը» աշխատությունը (1724, 1-ին հատոր), որում Բարնեթը վիթխարի քաղաքական ազդեցություն է վերագրում իրեն: Ա. Փոուլիի նշված երգծական երկում «Փ. Փ.»-ն, որ հայտնի է սաղմուսներ երգելու իր ձիրքով, ակումբ է ձևավորում տեղի գարեջրատանը՝ բնարկելու աշխարհի անցուդարձերը, և արդյունքում ակումբի տեսակետներն ընդունվում ու գործնական կիրառություն են գտնում աշխարհի առաջնորդների կողմից: Տե՛ս նաև Sartor Resartus, էջ 59:

⁵ Ըննական հրատարակության խմբագիր Թրիս Ռ. Վանդեն Բոստեն չակերտներում բերված այս մտքի աղբյուրը չի հայտնաբերել (*not identified*): Սակայն այս ձևակերպումը հաճախադեպ է նաև ինքնին Քարլայլի երկերում (տե՛ս, օրինակ, Sartor Resartus, էջ 181): Միայն չէին հավանականությամբ կարծում ենք, որ հեղինակն աստ ակնարկում է մարդկային փոխհարաբերությունների եզականության (*oneness*) ֆիխտեական

հեշտ է, որոշ առումով, ձեր ամենագետ Նանակի համար՝ աշխատել առանց ուժ վատնելու (կամ [առանց նրա], ինչը մենք սխալ ենք կոչում) և գործնականորեն ներկայացնել նոր պատմությունը նույնքան գերազանց կերպով, որքան նա գիտեր հինը տեսականորեն: Ըմբռնելով, թե ինչ էր [այս] տրված աշխարհը, ինչ ուներ այն և ինչ էր ուզում, ինչպե՛ս կարող էր նրա պարզորոշ փորձը զարնել ճիշտ ժամանակին ու ճիշտ տեղին՝ համակ սաստկացնելով ճշմարիտ ընթացքն ու ձգտումը [և] ոչ մի տեղ չդադարելով հակազդել դրանց: Ցավոք, այսպիսի ոյուրահոս, հարածուն ընթացք բնավ սահմանված չէ մեզ. [փոխարենը] հակահոսանքներն ու խառնակ մակընթացություններն են մերը: Անհամար ճիգեր (ամեն նոր մարդ [մի] նոր ճիգ է՝) ի չիք են դառնում անբովանդակ հորձանուտներում. այսպիսին է Գոյության գետը՝ այսքան հորդահոս, մսխիչ: Եվ բովանդակ զանգվածներ ու սերունդներ ցավալի անխոհեմությամբ վատնում և վատնվում են մի բանի վրա, ինչը երբեք չի կարող օգտավետ լինել: Եվ մի՞թե այս ամենը կիսով չափ սկիզբ չի առնում այն բանից, ինչը մենք Պատմության մեջ կատարելության պակաս անվանեցինք, [իսկ] մյուս կեսն իրավամբ մեկ այլ՝ Է՛լ ավելի խորը և Է՛լ ավելի անուղղելի պակասությունից:

Այստեղ, սակայն, եկեք ընդունենք, որ նման պատմական պակասության առնչությամբ Բնությունը ոչ մի դեպքում մեղավոր չէ: Զննելով հարցի մյուս կողմը՝ փոխարենը եկեք հիանալ նրա թափած ջանքերով, նրա հիրավի հոյակապ կանխահոգությամբ առ այն, որ այդ նույն Կտակը կարողանա մեզ հասնել անսահման լրությամբ: Մենք բավականաչափ ձիրք և ունակություններ ունենք. այդ Բնության իմաստուն կամքն է նաև, որ մեզ շնորհված և ոչ մի ունակություն չի բթանում անգործածությունից: Խոսքի զարմանահրաշ ունակությունը՝ մեկ անգամ տրված, այլևս ոչ թե ընդունակություն, այլ անհրաժեշտություն է: Լեզուն, շատ թե քիչ առումով, կշարունակի խլրտալ և լոկ [ի դեմս] մի որևէ Լա Տրապի², [շնորհիվ] անպատմելի ինքնատիրապետման, կժուժկալի խլվլալ: Նույնպես և մատները, որ ճանաչել են գրելու հրաշքը, [հազվադեպ] կարող են անգործության մատնվել. եթե կա խոսելու տենչ, ապա մենք գիտենք, որ կա նաև գրելու տենչ, որը թերևս առավել անսանձ է: Ասում են՝ «մարդիկ այնքան ծարավի են խոսելու, որ թույլ չեն տալիս միմյանց խոսել»³: Բայց, մյուս կողմից, գրելը սովորաբար մեկուսի գործընթաց է, և ամեն ոք իր սեփական գրասեղանն ու թանաքամանն ունի և նստում է անդ ինքնակա ու անկաշկանդ: Հունկ ուրեմն՝ բյուրապատկեք գրչի այդ գորությունը, ասել է թե՛ հնարեք տպագրահաստոցը⁴՝ իր լրատարներով, խմբագիրներով, թղթակիցներով, գրավաճառներով, ազդագիր փակցնողներով (Billstickers) և տեսե՛ք, թե այն ինչ

ըմբռնումը, այն է՝ մարդկությունը մեկ է, քանզի այն ի սկզբանե տրոհված չէր անհատների (unindividualized) և ի մի էր Աստվածային գաղափարի (Divine Idea) հետ, [ուստի] այժմ անհատը հանապապ վերամիավորման պետք է ձգտի այդ Միակի, [Մեկ բապումի] հետ (տե՛ս Charles F. Harrold, նշվ. աշխ., էջ 193):

¹ Իր «Կոնս Կալիոստորո» (1833) հոդվածում Քարլայլն ամեն մի մարդկային կյանք նմանեցնում է պոեմի՝ քաղված համաշխարհային պատմության մեծ Էպոսից կամ ավետարանից (տե՛ս Historical Essays, էջ 24):

² Ցիստերցիանական վանականների միաբանության արքայությունը, որտեղ վանականները լռության ուխտ են կնքում: Միաբանության հիմնադիրն (1664 թ.) Է լա Տրապի արքայության արքահայր Արման-ժան լե Բուտիյե դե Ռանսեն (1626-1700): Պաշտոնապես կոչվում է «խստակարգ հետևողությամբ ցիստերցիանական միաբանություն» (Ordo Cisterciensis Strictioris Observantiae, OCSO), սակայն Սոլիսի լա-Տրապ կոմունայում գտնվող մենաստանի անվամբ նրանց ուղղակի անվանում են տրապպիստներ: 20-րդ դարում վերջիններիս հանդեպ ուշադրությունն ու հետաքրքրությունը մեծապես աճեց ամերիկացի տրապպիստ-վանական, աստվածաբան, բանաստեղծ Թոմաս Մերթոնի (1915-1968) գործունեության շնորհիվ:

³ Չակերտներում բերված այս միտքը Զրիս Ռ. Վանդեն Բոսսեն դարձյալ նշում է իբրև չբացահայտված՝ ենթադրելով, սակայն, որ Քարլայլը թերևս հղում է հայտնի առածին. «Երբ բոլորը խոսում են՝ ոչ ոք չի լսում»:

⁴ Գրատպության գյուտի կարևորությունն ու նշանակությունը Քարլայլի սիրելի թեմաներից է: «Sartor Resartus»-ում նա գրում է. «Նա, ով առաջինը կրճատեց գրագիրների աշխատանքը շարժական տպատառերի միջոցով, վարձու բանակներ էր արձակում և տապալում բազում արքաների ու սենատների՝ ստեղծելով բովանդակ նոր ժողովրդավարական աշխարհ, քի նա հայտնագործել էր գրատպության արվեստը» (էջ 30): Ավելի ուշ, «Յերոսների մասին»-ում Քարլայլը գրելու էր. «Ավնհայտ է, սակայն, որ գրքերի ոյուրավ ձեռքբերման այս պարպ հանգամանքում գործի վարման բոլոր պայմանները փոխվեցին վերից վար: Գրատպության հայտնագործմամբ դուք կերպափոխեցիք բոլոր համայնարանները կամ դու՛րս մղեցիք դրանք» (տե՛ս On Heroes, էջ 139): Տե՛ս նաև Early German Literature (1831), Miscellanies, 2:317-318:

կանի: Այսպիսին են [այն] միջոցները, որոնցով Բնությունը և Արվեստը՝ Բնության դուստրը, զինել են իրենց սիրեցյալին՝ մարդուն, ինքնահրատարակման համար:

Դիտարկեք արդ երկու բան. առաջին՝ որ միջին արագության լեզուն օրական կիրառարակի մեկ ութամաս (octavo) սովոր հատոր, և այնուհետ բավական ղյուրաշարժ որքան լեզուներ ենթադրաբար աշխատելիս կլինեն այս երկիր մոլորակի վրա՝ այս Լոնդոն քաղաքում [և] այս ժամին: Երկրորդ՝ որ գրական թղթակիցը, եթե լավ տրամադրության մեջ է և քաղցից դրդված, բազմիցս (ինչպես մենք արժանահավատ կերպով իրազեկ ենք) կլրացնի հանդեսի¹ իր երկու թերթը² քսանչորս ժամում. այսօրինակ թղթակիցներն այժմ ոչ թե հազարներով, այլ միլիոններով են հաշվվում: Ավելին, քննելով Պատմությունն իր առավել նեղ, գռեհիկ իմաստով՝ իբրև «դեպքերի» հասարակ ժամանակագրություն³, իրողությունների, որոնք, ինչպես ասում ենք, կարող են «պատմվել», մեր հաշվարկը տակավին քիչ է փոխվում: Պարզ պատումը, հարկ է նշել, խոսքի հիմնական ատաղձն է. «հասարակ մարդը»,— ասում է ժան Պոլ⁴,— «շաղակրատ է պատումի [և] աղբատիկ՝ խորհրդածության մեջ. [և] լոկ կրթված մարդու պարագային է, որ [ամենն] այլ կերպ է՝ ընդհակառակը»⁵: Մարդկության հրատարակչական [ինարավորության] անգամ հազարերորդ մասը (թեև գուցե միլիոներորդն էլ բավական կլիներ) Ստեփ շրջանառության համար հատկացնելու դեպքում տակավին մնում է ինը հարյուր [և] ինսուսինը՝ բուն Պատմության մեջ գործի դրված, իրադարձությունների պատմության կամ դրանց հավանականությունների կռահման մեջ, ասել է թե՛ կամ Պատմության, կամ՝ Մարգարեության մեջ, որը Պատմության մի նոր ձև է [համարվում], ուստի ընթերցողը կարող է պատկերացում կազմել, թե մարդկային բանականության այս ներուժն ինչ հարստությամբ է օժտված մեր աշխարհում, թե արդյոք Բնությունը ժլատ կամ առատաձեռն է եղել նրա հանդեպ: Քաջալերվիր, ընթերցող: Պատմության հետազոտողը երբեք չի կարող [մտավոր] սննդի կարիք ունենալ, ինչ էլ որ պատահի. մի՞թե քո ամենօրյա լրաթերթում⁶ քառասունութ ոտնաչափ երկայնքով մանրատառ տպագրությամբ Պատմություն չկա:

¹ Խոսքը հենց «Ֆրեյլերի հանդես»-ի մասին է, որում և սույն հոդվածը տպագրվել էր:

² Մյուս գրողների պես Քարլայլը ևս վարձատրվում էր մեկ թերթի հաշվարկով, որը հավասար էր 16 տպագիր էջի, ուստի երկու թերթը համարժեք կլիներ 32 էջի: Բանի որ «Ֆրեյլերի հանդես»-ը բաղկացած էր 8 թերթից, ապա երկու էջը կկազմեր նրա մեկ քառորդը:

³ Պատմության այսօրինակ ընկալումը հեղինակը մերժում է նաև պատմաստեսական իր առաջին՝ «Ի վերայ պատմութեան» (1830) հոդվածում (տե՛ս Գ. Ա. Ճաղարյան, Թոմաս Քարլայլը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «ԿԷՆ», էջ 73):

⁴ Ժան Պոլ (Յոհան Պաուլ Ֆրիդրիխ Ռիխտեր, 1763-1825), գերմանացի վիպասան, երգիծաբան, որի բանավեստը կապող օղակ է վայնարյան դասականության ու վաղադարձականության միջև: 1825-ից մինչև վաղ 1830-ականների կեսեր ժան Պոլը Քարլայլի աշխարհայացքի վրա հիմնարար ազդեցություն գործած հեղինակներից է, որի գրական ուղուն և գաղափարներին Քարլայլն անդրադառնում է նրան նվիրած իր երկու հոդվածներում (1827, 1830): Անվիճելի է ժան Պոլի ազդեցությունը «Sartor Resartus»-ի բովանդակության, կառույցի ու ոճի վրա: Քարլայլի հայացքների վրա ժան Պոլի և նրա բանավեստի ազդեցությունը հանգամանորեն քննված է գրականագիտության ու գրաքննադատության մեջ (տե՛ս հատկապես Charles F. Harrold, նշվ. աշխ. (ողջ աշխատությունում՝ ազդեցության պնակապան կողմերի առնչությամբ); J. W. Smeed. *Thomas Carlyle and Jean Paul Richter, in Comparative Literature* 16 (1964), էջ 226-253; René Wellek, նշվ. աշխ., էջ 34-81; J. P. Vijn. *Carlyle and Jean Paul: Their Spiritual Optics*. Amsterdam: John Benjamin's Publishing Company, 1982; Elizabeth M. Vida. *Romantic Affinities: German Authors and Carlyle*. Toronto: University of Toronto Press, 1993, էջ 167-196):

⁵ Մեջբերում ժան Պոլի «Գնդերեց Շմելցլեի ուղևորությունը Ֆլեց» (1809) պատմվածքից, որը Քարլայլը թարգմանել է և վերադրել էր իր «German Romance»-ում (1827): Քարլայլը մեջբերում է հավանաբար ըստ հիշողության: Նրա թարգմանության սկզբնական տարբերակն է. «Հասարակ մարդը երկարաբան է լոկ պատմելիս և ոչ խորհելիս, [այնինչ] կրթված մարդը սակավաբան է հենց առաջինում և ոչ երկրորդում» (տե՛ս *The Works of Thomas Carlyle, ed. H. D. Traill, Centenary Edition, 30 vols. London: Chapman and Hall, 1896-1899. German Romance. 2 vols., 2:159* n): Քարլայլի՝ ժան Պոլի այս երկի օրինակը, որից էլ նա թարգմանել էր, վաճառվել է Սոթբիի աճուրդում (տե՛ս Sotheby, էջ 10):

⁶ Նկատի ունի ժամանակի տիպական չորսէջանոց լրաթերթը՝ բաժանված մոտ վեց սյունակների, յուրաքանչյուրը զրեթե ութ ոտնաչափ երկարությամբ:

Ճշմարտությունն այն է, որ եթե Համաշխարհային պատմությունն այդպիսի խղճուկ, վնասված «պատառիկ» է, ինչպես մենք կոչեցինք այն, ապա թերությունը ոչ թե մեր պատմական օրգանների, այլ համակ մեր կողմից դրանց սխալ գործարկման մեջ է, ավելի շուտ՝ այնքան շատ պակասությունների ու խոչընդոտների՝ տարբեր դարաշրջաններում փոփոխվող, որոնք աղճատում են [մեր կողմից] դրանց ճիշտ գործածումը: Հատկապես երկու պակասություն, որ սաստիկ ճնշում են բոլոր դարերում. ազնվության և բանականության: Եթե հրատարակված նյութը ճշմարիտ չէ, [այն] սոսկ ենթադրություն կամ նույնիսկ դիտավորյալ հերյուրանք, ապա ի՞նչ կարելի է անել դրա հետ, եթե ոչ ի չիք համարել ու վերացնել այն: Բայց [և] դարձյալ՝ ճշմարտությունը, ասում է Հորն Տուկը¹, պարզապես այն է, ինչին [մարդիկ] **հավատում**² են, հավատ են ընծայում, և արդ, [վերստին] գալով **ինքնին** այդ նյութին, ինչպիսի՜ նոր բախտորոշ եզրահանգում ենք ստիպված թույլ տալ: Առանց բանականության՝ հավատն ինքնին սակավօգուտ կլինի, և ինչպե՞ս կարող է ձեր հրատարակումն օգտավետ լինել, եթե դրանում չկա որևէ տեսունակություն, այլ լոկ կուրություն է: Քանզի ինչպես քաղաքական նշանակումների պարագային է, մարդը, որին նշանակում եք, [բնավ] նա չէ, ով ամենից ընդունակն է իր պարտքը կատարելու, այլ միայն նա, ով ամենից ունակն է՝ նշանակված լինելու: Նմանապես և բոլոր պատմական ընտրություններում (elections) ու ընտրանքներում (selections) շարունակվում է [այս] ամենախելացնոր աշխատանքը: Իրադարձությունը, որն ամենից արժանին է հայտնի լինելու, մնացյալ բոլորից թերևս ամենաբիչն է հիշատակվում: Ոմանք նույնիսկ ասում են, որ այդպիսին լինելն այդօրինակ իրադարձությունների բուն եղանակն է: Հայսմ՝ այդ նույն քառասունութ ոտնաչափ երկայնքով պատմություններում, կամ նույնիսկ երբ դրանք ձգվեն միանման որակի քառասունութ մղոն երկայնքով, անդ չի կարող լինել մատնաչափի մեկ քառասունութերորդ մասը, որն ինչ-որ բանի կվերածվի: Հիրավի, այս ժամանակներում տպագիր հրատարակության քանակը, որից կպահանջվի հրո ճարակի վերածվել, նախքան կարելի կլինի դրանից նվազագույն մշտական օգուտ քաղել, կարող է զմայլանքով, գրեթե երկյուղով համակել մեզ: Որտե՞ղ է, ավաղ, անվեհեր, հերակլեսյան Դոկտոր Վեգթեյը³, որ արեթի կվերածի այս բոլոր թղթակույտերը և արեթի երեք կաթիլ կենսահյութ⁴ կմզի դրանցից:

Քանզի, իսկապես, հայացք գցելով պատմական գրչի ու գրատպության գործին վերջին կես դարում, և [թե] Պատմության ինչ ծավալ է այն տալիս [դեռ] միայն այդ ժամանակաշրջանի համար, ու [թե] ինչպես է այն հետայսու [հակված] աճելու տասնորդական կամ քսանորդական երկրաչափական պրոգրեսիայով, — կարող է թվալ, որ հեռու չէ այն օրը, երբ (հասկանալով, որ բովանդակ երկիրն արդ [ունակ] չէ պարառելու [բոլոր] երկերն այն մասին, թե ինչ է կատարվել երկրի երեսին) մարդկային հիշողությունն անխուսափելիորեն կսուզվի ի մոռացություն և կդադարի հիշել: — Ոմանց համար նոր և սփոփիչ կարող է լինել մտորումն առ այն, որ մեր այս կացությունն այնքան էլ աննախադեպ չէ, որքան թվում է, և որ հիշողութ-

¹ Չոն Հորն Տուկ (1736-1812), *անգլիացի քաղաքական ու եկեղեցական այր, 18-րդ դարավերջին պառլամենտական ռեֆորմի և այլախոհության ամենապղծեցիկ քարոզիչներից, բանասեր, հրապարակախոս*:

² Այս ստագուբանությունը բերված է Հ. Տուկի բանասիրական քննախոսությունում, որի երկու հատորները հրատարակվել են համապատասխանաբար 1786 և 1805 թթ. (տե՛ս John Horne Tooke. *Epea Ptepoenta; or, The Diversions of Purlley*. 2 vols. 1798. Menston, U. K.: Scholar, 1968, 2:403):

³ Հայտնի չէ, թե ում նկատի ունի կամ ինչին է հղում Քարլայը: Սակայն ելնելով հեգնական համատեքստից և այն փաստից, որ «wagtail»-ը (թարգմ.՝ «խաղատուտ») քամահրանք/արհամարհանք խորհրդանշող մակդիր է, կարելի է կարծել, որ Քարլայն այդ բառով բնորոշում է հեթմական-խաբեական բուժամիջոցների մատակարարին:

⁴ Արեթի մկվածքն իբրև դեղամիջոց էր կիրառվում տարատեսակ ցավերի ու հիվանդությունների դեպքում:

յան ու հիշարժան բաների պարագայում իրերի դրությունն ի բնե հանապազ միանման է եղել: Ներոնի¹ կյանքը մի քանի ադամանոյա էջ է զբաղեցնում մեր Տակիտոսի² [երկում], սակայն Ներոնի սերնդի մագաղաթի ու պապիրոսի դիվաններում որքան տեղ է այն գրավել: **Vie de Sénèque**-ի հեղինակը³, այս հեռավորությունից ի մի հավաքելով մնացորդային մի քանի պատառիկներ, հեշտությամբ երկու ութածալ [հատոր] պատրաստեց դրանցից: Մյուս կողմից՝ եթե այնժամ գոյություն ունեցող հռոմեական հուշագրությունների բովանդակությունը կամ, ամենից հեռուն գնալով, եթե այն ամենը, ինչ այնժամ **խոսվել** էր դրա մասին, մեքենագիր շարվեր, ապա քանի՜ «ոտնաչափ երկարությամբ» մանրատառ (small-pica) կունենայինք, որը գոտու տեսքով շուրջանակի կեզերեր երկրագունդը:

Յետևաբար Պատմությունը, նախքան այն կզորի Յամաշխարհային պատմություն դառնալ, կարիք ունի ամենայն ինչի խտացման: Եթե չլիներ Պատմության և ոչ մի հակիրճացում, անկարելի կլիներ հիշել մեկ շաբաթից անդին: Ավելին, առաջ գնալով և իսպառ բացառելով խտացումը՝ մենք չէինք կարողանա հիշել [Լույսիսկ] մեկ ժամ կամ ընդհանրապես, զի ժամանակը, հանգույն Տարածության, անվերջ **սորհելի** է, և ժամը՝ յուր իրադարձություններով, զգայություններով ու հույզերով, կարող էր ընդլայնվել այնպիսի ծավալմամբ, որ կծածկեր հիշողության բովանդակ դաշտը և դուրս կմղեր մնացյալ ամենը [դրա] սահմաններից անդին: Սովորությունը, սակայն, և մարդու բնական կերտվածքն ըստինքյան օգտակար կանոններ են սահմանում մտապահման համար, և մեր բոլորից ապահով հեռավորության վրա պահում այդօրինակ երևակայական հավանականությունները, որոնք կարող էին պատահել լոկ մի որևէ անմիտ մահմեդական խալիֆի հետ՝ սուզելով իր զլուխը կախարդական ջրով դույլի մեջ⁴ և այդպիսով մեկ թաց թուղի վերածելով ստրկության ու գրկանքի յոթ երկարածիգ տարիների: Ամենաբռնի ռամիկի գլխում պարզորոշ կերպով դրոշմված է Տարեցույցերի⁵ լրակազմը, և առանց Յիշողության արվեստի (Mnemonics) մեջ նվազագույն վարժանքի՝ բոլոր պատշաճ դադարները, ենթաբաժիններն ու ենթակարգությունները՝ փոքրից մեծ,

¹ Ներոն Կլավդիոս Կեսար Ավգուստոս Գերմանիկոս (37-68 թթ.), *Յոմի կայսր* (54-68) *Յուլիոս-Կլավդիոսների գահատոհմից*:

² Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոս (շուրջ 56-120 թթ.), *հռոմեացի ճարտասան, հասարակական-քաղաքական գործիչ և պատմագիր: Զարլայը նկատի ունի նրա «Տարեգրությունը» (115-117?) երկը, որի 13-16 գրքերը պարառում են Ներոնի գահակալության տարիները: Տակիտոսի այս երկի Զարլայի օրինակը պահվում է Carlyle House-ում:*

³ Դենի Դիդրո (1713-1784), *Լուսավորականության դարի ֆրանսիացի իմաստասեր, գրող, դարաշրջանի կրթողային երկերից «Յանրագիտարան»-ի (Encyclopédie) գլխավոր խմբագիրը (1745-1772): Զարլայն աստ հղում է նրա «Ակնարկ փիլիսոփա Սենեկայի կյանքի, նրա երկերի ու Կլավդիոսի և Ներոնի գահակալության մասին» (1779-1782) աշխատությանը: Ի տարբերություն սույն հոդվածում նշված պատմական մյուս երկերի՝ Դիդրոյի այս աշխատանքը մաս չի կազմում Զարլայի վաղ շրջանի ընթերցանության: 1833 թ. ապրիլին «Foreign Quarterly Review»-ում լույս էր տեսել Դիդրոյի երկերի մասին Զարլայի գրախոսություն-հոդվածը (տե՛ս *Miscellanies*, 3:226), որով էլ թերևս պայմանավորված է Դիդրոյի և նրա երկի հիշատակումը սույն հոդվածում:*

⁴ Չ. Էդիսոն, «Spectator», no. 94 (18 հունիսի, 1711): Իր այս հոդվածում անգլիացի ակնարկագիր, բանաստեղծ, դրամատուրգ Չոպեֆ Էդիսոնը (1672-1719) հեքիաթային պատմություն է ներկայացնում թուրքական մի սուլթանի մասին, որին մի «մեծն Օրենսգետ» հայտնում է, թե ինչպես Մուհամմադը կարող էր «իննսուն հազար խորհրդակցություն ունենալ Աստծո հետ» մեկ վայրկյան ժամանակում: Օրենսգետը սուլթանին հրահանգում է գլուխն ընկղմել ջրով յի տակառի մեջ, որից հետո սուլթանն իսկույնս էթ հայտնվում է «ծովեպրին [խոյազող] լեռան ստորոտին»: Սուլթանն ամուսնանում է, ունենում 14 զավակ, ապա կորցնում իր կարողությունը և դառնում մուրացիկ: Որոշելով մի օր լողանալ՝ նա սուզվում է ծովում և այնուհետ գլուխը ջրից բարձրացնելիս «հայտնվում տակառի կողքին»: Օրենսգետը գալիս է այն եպրահանգման, որ «ոչինչ անհնար չէ Աստծո հետ, և որ Նա, որի համար հազար տարին սուկ մեկ օր է, կարող է այնպես անել, [եթե հաճի], որ մեկ օրը, անգամ մեկ վայրկյանը հազար տարի թվա իր [ստեղծած] յուրաքանչյուր էակի համար» (տե՛ս Joseph Addison, and Richard Steele. *The Spectator*. Ed. Donald Frederic Bond. 5 vols. Oxford: Clarendon, 1965, 1:400-401): Այս պատումն առկա է նաև *իզանդացի բողոքական քահանա, դրամատուրգ և վիպասան Չարլզ Մեթյուրնի (1782-1824) «Մելմոթ թափառականը» (1820) գրթական վեպում (տե՛ս Charles Robert Maturin. Melmoth the Wanderer: A Tale. Ed. Douglas Grant. London: Oxford University Press, 1968, 2:8):*

⁵ «Տարեցույց աշխարհի անցուդարձերի» (*Annual Register of World Events (1758 թ.-ից ցորս)*), ամենամյա տեղեկատու, որում արձանագրվում և վերլուծվում են տվյալ տարվա ընթացքում աշխարհի նշանակալի

գետեղված են այնտեղ: Հիշողությունն ու Մոռացությունը, որպես ցերեկ ու գիշեր և հիրավի ինչպես մնացյալ բոլոր ներհակությունները մեր այս տարօրինակ, երկդիմի Կյանքում, անհրաժեշտ են մեկմեկու գոյության համար: Մոռացությունը մութ է, որի վրա Հիշողությունը շարագրում է իր լուսաճառագ նշանագրերը և ընթեռնելի դարձնում դրանք: Եթե այն համակ լույս լիներ, անկարելի կլիներ որևէ բան կարդալ այնտեղ, ոչ ավելի, քան եթե այն համակ խավար լիներ:

Ինչպես որ մարդու և նրա այդ ինքնակենսագրական Տարեցույցերի, այնպես էլ Մարդկության ու նրա Համաշխարհային պատմության պարագային է, որը նաև **Նրա** ինքնակենսագրությունն¹ է. հիշելու և մոռանալու համանման անգիտակից ձիրքը կրկին գործում է այստեղ: Եթե օրվա անցուդարձերը երբեք այդքան աղմկալից չլինեն, չեն կարող ընդմիջտ հնչել մնալ: Վաղվա օրը գալիս է իր նոր աղմուկներով, որոնք ևս հավակնում են գրառված լինելու: Գոյության այս քառսի վիթխարի պայթարում ու նվազահանդեսում պատկեր պատկերի հետևից անհետանում են, որպես և **ամենայն ինչ**, որ [մի օր] ծագել [և] մի օր էլ ի չիք է դառնալու. այն, ինչը չի կարող մտապահվել, պետք է նույնիսկ դուրս մղվի մտքից: Պատմությունն ինքնասեղմվում է ընթեռնելիության աստիճանի, և վերջապես մի որևէ Բոսյուեի կամ Մյուլլերի ձեռքերում Աշխարհի բովանդակ տպագիր պատմությունը, արարչագործությունից ի վեր, ավելի է կրճատվել², քան Փորթսոթենի վարչաշրջանի³ [պատմությունը]՝ մեկ արեգակնային օրում:

Արդ, կասկածի տեղիք կարող է տալ, թե արդյոք այսօրինակ կրճատումն ու համառոտումը միշտ են իմաստնաբար հղացված, կամ [էլ], ընդհակառակը, ինչպես [արդեն] ասացինք, ոչ մի կասկած [էլ] չկա [դրանում]: Խայտառակ կլեոպատրաներն⁴ ու մեսալինաները⁵,

իրադարձություններն ու վարդագունները: Քարայլն ուներ 1758-1828 թթ. բոլոր համարները, որոնք այժմ պահվում են Carlyle House-ում:

¹ Հմմտ.՝ «[...] Ընկերային կյանքը հասարակությունը կազմող բոլոր անհատ մարդկանց կյանքերի ամբողջությունն է, իսկ Պատմությունն անհամար կենսագրությունների հանրագումարն է» (տե՛ս Գ. Ա. Ճադարյան, Թոմաս Քարայլը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «Վեմ», էջ 66):

² Լկատի ունի ֆրանսիացի աստվածաբան, ճարտասան, Մոյի եպիսկոպոս Ժակ-Բենիմ Բոսյուեի (1627-1704) «Քննախոսություն համընդհանուր պատմության մասին» (1681) և շվեյցարացի պատմաբան, հասարակական գործիչ Յոհաննես Մյուլլերի (1752-1809) «Քսանչորս գիրք հատկապես Եվրոպայի մարդկության ընդհանուր պատմության [մասին]» (1810) երկերը: Այս հեղինակներն աշխարհի պատմությունը սեղմել-ամփոփել են մեկ երկի սահմաններում (տե՛ս նաև 54-րդ ծնթ.): 1822 թ. նոյեմբերի 18-ին իր ապագա կնոջը՝ Չեյն Բեյլի Ուեյլին (1801-1866) հղած նամակում Քարայլը նրան խորհուրդ էր տալիս կարդալ Բոսյուեի երկը՝ իբրև ընդհանուր «ուրվագիծ պատմության ողջ ասպարեպի», բայց և վզուշացնում էր, որ այն «մի [ամբողջ] դարով չափապանց հին է մեկ համար» (Letters, 2:206): «Շիլլերի կյանքը»-ում Մյուլլերի մասին Քարայլը գրում էր, որ նրա «պատմությունները... սեղմ ծավալում և հաճախ պարզորոշ կարգով հարուստ ու արժանահավատ տեղեկություններ են հաղորդում, որոնք անգերապանցելի են [որպես այդպիսին], սակայն իբրև մտքի արգասիք՝ դրանք չեն կարող համեմատվել Շիլլերի [պատմական] երկերի հետ» (տե՛ս Life of Schiller, էջ 104; նաև՝ Miscellanies, 1:143-144): Քարայլը Մյուլլերին քանիցս հիշատակում է իր «Բանախոսություններ գրականության պատմության մասին»-ում (1838) (տե՛ս Lectures on the History of Literature. Ed. J. Reay Greene. New York: Scribner, 1892, էջ 17, 20, 41, 108, 126, այսուհետ՝ History of Literature):

³ Լոնդոնյան սիթիի արևելյան վարչաշրջաններից մեկը, ներառյալ Հաունդսդիչը: Այս շրջանը քաջ հայտնի էր իր հրեական բնակչությամբ, մասնավորապես հնտոիավաճառ առևտրականներով, որոնք հանդես են գալիս «Sartor Resartus»-ում (էջ 58):

⁴ Կլեոպատրա VII Ֆիլոպատր (Ք. ա. 70/69-30 թթ.), հելլենիստական Եգիպտոսի վերջին գահակալը (Ք. ա. 51-30 թթ., Պտղոմայոսյան հարստություն): Սիրուհին էր հռոմեացի վորավար և եռապետ Մարկուս Անտոնիոսի (Ք. ա. 83-30 թթ.), որի անկման պատճառն էլ դառնալու էր:

⁵ Վալերիա Մեսալինա (17/20-48 թթ.), Հռոմի կայսր Տիբերիոս Կլավդիոսի (41-54 թթ., Յուլիոս-Կլավդիոսների հարստություն) երրորդ կինը, որ հայտնի էր հույժ անբարո վարքով: Կայսեր հրամանով նա սպանվեց իր սիրեկանի՝ սենատոր Գայուս Սիլիոսի (13-48 թթ.) հետ հրապարակային ամուսնության պատճառով:

կալիգուլաներն¹ ու կոմմոդուսներն² անշահեկան հարաբերակցությամբ ապրում են [մեր] հիշողության մեջ, այնինչ գիտնական Պանկիրոլուսը³ պետք է գրի իր **Կորուսյալ արվեստների գիրքը**⁴: Իսկ [մի] բարոյախոս Պանկիրոլուս, թե օժտված լիներ կանխատեսությամբ, կարող էր էլ ավելի տրտմալի՝ **Կորուսյալ առաքինությունների գիրք**⁵ հեղինակել գործող և անվեհեր ու տոկուն ազնվայրերի մասին, որոնց հերոսական կյանքը, որպես ինքնին Կյանքի նոր հայտնություն և բարգավաճում, կպատկաներ բոլորին, սակայն արդ կորսված է ու մոռացված, [զի] Պատմությունն այլ կերպ է լցրել նրա էջը: Իրականում այստեղ, ինչպես [և] այլուր, շատ բան կանխորոշում է այն, ինչը մենք Պատահականություն ենք կոչում. համենայն դեպս, Պատմությունը պետք է տեղի ունենա ոչ թե ինչպես հարկն է, այլ ինչպես կարող է և կամենում է:

Նկատեցեք, այնուհանդերձ, թե ինչպես [հենց] միայն բնական հակումով և, այսպես ասած, առանց մարդու հոգացողության, ընտրանքի որոշակի համապատասխանությունն (և անգամ զգալի չափով) անխուսափելի է դառնում: Ընտրանքը չի կարող համակ արժեզուրկ լինել, եթե այն ուղղորդելու համար ավելի լավ կանոն չլիներ, քան այս մեկը. որ մարդիկ շարունակ խոսում են լոկ այն մասին, ինչ գոյություն ունի և եռանդագին գործում է նրանց կողքին: Ուստի այն իրադարձությունները, որոնք պտուղ են տվել, ավելին՝ որոնց պտուղը տակավին աճում է, [հենց] այն իրողություններն են, որ ընտրվել են գրավոր հիշատակման համար, և լոկ դրանք էին նշանակալից և արժանի գրի առնվելու: Շալոնի ճակատամարտը⁶, որտեղ Յոնաց աշխարհը հանդիպեց Յոմին, և Երկիրը սրերի ցանկապատի ներքո խաղարկվում էր երկու հսկաների կողմից, որոնք հեծնել էին այն, և որոնց սուսերի թափը բաժան-բաժան արեց թագավորությունները, աղոտ կերպով սավառնում է քչերի տկար հիշողության մեջ, այնինչ թշվառ Իսկարիովտացու ճղճիմ դատառստիկանական (police-court) մատնությունը⁷ «երեսուն արծաթի» դիմաց՝ կատարված Պաղեստինի թշվառ հողում դարեր առաջ, վառ է բոլոր մարդկանց մտքերում [ու] սրտերում: Դեռ ավելին, ինչպես որ նշանակալից է լոկ այն, ինչը պտուղ է տալիս, նմանապես և բոլոր այն իրողությունները, որոնց պտուղը տակավին այստեղ է և հասունանում է, պետք է մեծագույնը լինեն, հիշատակության արժանի լավագույնը, որը դարձյալ, ինչպես տեսնում ենք, գործի բուն եռությունից ելնելով, գլխավորապես [հենց] այն բանն է, ինչը մտապահվում է: Նկատեցեք նաև, թե ինչպես է այս «գլխավորապես»-ը միշտ ձգտում վերածվելու «բացառապես»-ի, և մոտավորը շարունակաբար ավելի է մոտենում, քանզի մանրուք մանրուքի հետևից, մարդկանց կենդանի գործունեությունից անհետանալուն զուգընթաց, զատվում են նրանց խոսքից ու հիշողությունից, և մեծն ու կենսականը ավելի ու ավելի բացառաբար են կենում այնտեղ: Այսպես է

¹ Գայուս Կեսար Գերմանիկուս (մականունը՝ Կալիգուլա, 12-41 թթ.), Յոմի կայսր (37-41 թթ.) Յուլիոս-Կլավդիոսների հարստությունից: Յայտնի էր որպես մոլազար, անողոք գահակալ:

² Լուցիոս Էլիոս Ավրելիոս Կոմմոդուս (161-192 թթ.), Յոմի կայսր (177-192 թթ.) Անտոնինուսների հարստությունից: Յայտնի էր որպես հեշտամոլ, բռնավոր և անողորմ գահակալ: Սպանվել է դավադրության հետևանքով ըմբիշ Նարցիսուսի կողմից:

Գիրքնի գլխավոր երկում այս չորս պատմական դեմքերը (Կլեոպատրա, Մեսայինա, Կալիգուլա, Կոմմոդուս) ապականության ու այլասերման խորհրդանիշ են, ուստի Զարյայի կողմից հենց այս չորսի հիշատակումը պատահական չէ և պայմանավորված է գիրքնյան այդ ընկալմամբ:

³ Գլիդո Պանկիրոլի (1523-1599), իտալացի հնախույզ, պատմաբան, իրավագետ և իրավունքի պրոֆեսոր Ֆերարայի, Պարուայի ու Թուրինի համալսարաններում: Խոսքը նրա «*Rerum memorabilium, iam olim deperditarum*» (1599) երկի մասին է, համեմատական ակնարկ, որ քննության է առնում գիտելիքների կորստի իրողությունը հնադարից ի վեր:

⁴ Թավատառ ընդգծումը մերն է:

⁵ Թավատառ ընդգծումը մերն է:

⁶ Յայտնի է նաև «Կատալաունյան դաշտերի ճակատամարտ», «Ժողովուրդների ճակատամարտ» անուններով: 451 թ. հունիսի 20-ին հռոմեացիների (առաջնորդությամբ փորափար Ֆլավիոս Աետիոսի) ու վեստգոթերի (առաջնորդությամբ Թեոդորիք I արքայի) դաշինքը Մառն գետի ափին՝ Շալոնի (արդի Ֆրանսիայի իյուսիս-արևելք) մատույցներում, կասեցրեց Ալբիլայի արշավանքը դեպի Գաղիա:

⁷ Մատթ. 26: 15:

պատահականությունը շտկում պատահականությունը, և իրերի զարմանահրաշ, անսահման հրմշտություն (մի) նպատակալից (aimful) Ուժ գերիշխում է դրա վրա, ավելի ճիշտ՝ ապրում է դրա մեջ) [մի] արդյունք է ստացվում, որի հետ կարելի է հաշտվել:

Համենայն դեպս, հետաքրքրական է, և մեր կյանքում արժե մեկ անգամ տեսնել Պատմության այդ նույն խտացումը, ինչպիսին էլ [որ] լինի դրա ընթացքը: [Թե] ինչպե՛ս է «քառասունութ ոտնաչափ երկարություն»-ը կրճատվել մեկ դար անց, տասը դար անց: Ետ նայեք՝ վերջից դեպի սկիզբ, յուրաքանչյուր պատմությանը, մեր սեփական՝ *Անգլիայի* [պատմությանը]: Թե ինչպե՛ս է հեռապատկերի կանոնով այն արագորեն կրճատվում կտավից [հեռանալիս]: [Մի] դժբախտ սիբարիտ¹, որից եթե երկու դար հեռու կանգնենք և կոչենք նրան Չարլզ Երկրորդ², տասներկու անգամ ավելի մեծ տարածություն կունենա, քան հերոսական Ալֆրեդը³, և երկու կամ երեք հազար անգամ ավելի՝ եթե անվանենք նրան Չորջ Չորրորդ⁴: Բովանդակ Սաքսոնական յոթնապետությունը⁵ (Heptarchy), թեև այնժամ տեղի ունեցան իրադարձություններ, որոնց համեմատ Մեծ հրովարտակն⁶ (Magna Charta) ու աշխարհահամբավ երրորդ ընթերցումը⁷ (Third Reading) փոշեհատիկ են կշեռքի վրա⁸, – զի մի՞թե Անգլիան, էլ չասած մնացյալի մասին, եթե ներկայացված էլ չէր Պառլամենտում, այդուհանդերձ ի քրիստոնեություն դարձի եկած էր⁹. – [ահա], ես ասում եմ, որ համայն Սաքսոնական յոթնապետությունը գործնականում ամփոփված է Միլթոնի մի նախադասության մեջ¹⁰, այն միակի, որն ընդօրինակեցին հետագա գրողները կամ մտապահեցին ընթերցողները, [այն էլ]՝ «ուրուրների և ագռավների զգվտուքի ու խռնության» [մեջ]: [Այլ] ոչ այն խրախճանքի

¹ Հին հունական Սիբարիս գաղութի (Լուկանիա մարզ) անունից, որ հայտնի էր իր հարստությամբ ու պերճանքով: Լայն առումով՝ ցովակյաց, գրգամուլ, փափկասուն մարդ:

² Չարլզ Երկրորդ (1630-1685), Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի թագավոր (1660-1685) Ստյուարտների հարստությունից: Նրա գահակալությունը համընկնում է Ռեստավրացիայի (Վերականգնում) շրջանի հետ: Ուներ մի քանի սիրուհիներ ու ապօրինի զավակներ: Չարլզ Երկրորդի անունը կապվում է նաև թատրոնների վերաբացման հետ, որոնք փակվել էին Երկարատև պառլամենտի 1642 թ. սեպտեմբերի որոշմամբ:

³ Ալֆրեդ Մեծ (847/849-899), արքա Ուեստեքսի (871-886) և անգլասաքսերի (886-899): Առաջինը Բրիտանիայի անգլասաքս կառավարիչներից, որ սկսեց կոչել իրեն Անգլիայի թագավոր: 878 թ. մայիսին ջախջախիչ պարտության է մատնել դաների հինգերմանական ցեղին:

⁴ Չորջ Չորրորդ (1762-1830), Անգլիայի Արքայապետ-հնամակալ (1811-1820), ապա՝ Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ Թագավորության ու Հանուվերի արքա (1820-1830): Անխոհեմ և ցոփ գահակալի համբավ էր վաստակել:

⁵ Անգլիական յոթ թագավորությունները 5-9-րդ դարերում. Նորթումբերլենդ, Արևելյան Անգլիա, Եսեքս, Մերսիա, Ուեսեքս, Սասեքս և Զենո: «Յոթ թագավորություններ»-ի պատմագրական ավանդույթը միջնադարյան է՝ առաջին անգամ արձանագրված անգլիացի պատմագիր և բանաստեղծ Հենրի Հանթինգդոնցու (շուրջ 1088-1157) «Պատմություն Անգլիական ժողովրդի» (մոտ 1129 թ.) երկում:

⁶ Ապատությունների Մեծ հրովարտակ (Magna Carta Libertatum), իրավունքների հրովարտակ՝ ստորագրված Անգլիայի արքա Չոն Անհոդինի (1199-1216) կողմից 1215 թ. հունիսի 15-ին Ռանհիմո կոչվող վայրում: Մեծ հրովարտակը գալիք դարերում վիթխարի ազդեցություն է գործել եվրոպական իրավաբանական մտքի վրա (տե՛ս Ապատությունների Մեծ խարտիա, Պատմության հարցեր – 5, տարեգիրք, խմբ.՝ Ա. Ստեփանյան, Ե., 2019, 232 էջ+4 էջ ներդիր):

⁷ Երրորդ ընթերցումը վերջինն էր օրինագծի երեք հրապարակային ընթերցումներից, որն անհրաժեշտ էր՝ բրիտանական պառլամենտի Համայնքների պալատի կողմից հավանության արժանանալու և ընդունվելու համար:

⁸ Հմմտ. Եսայի 40:15, «... [այ]մենայն հեթանոսք իբրև վկաթիլ մի ի դուլէ են, եւ իբրև զմանր փոշի կշռոյ համարեցան» (ընդգծումը մերն է):

⁹ Անգլասաքսերի ի քրիստոնեություն դարձը մեկնարկել էր Սաքսոնական յոթնապետության շրջանում, այստեղից էլ՝ Քարլայի պնդումն առ այն, որ դրա պատմական նշանակությունն ու կարևորությունն անհամեմատ ավելի մեծ էին, քան Մեծ հրովարտակի ստորագրումը:

¹⁰ Քարլային աստ մեջբերում է անում անգլիացի բանաստեղծ, պամֆլետագիր, քաղաքական մտածող Չոն Միլթոնի (1608-1674) «Բրիտանիայի պատմությունը» (1670) երկից (տե՛ս John Milton. *The history of Britain, that part especially now called England: from the first traditional beginning continued to the Norman Conquest. Collected out of the ancientest and best authors thereof.* London: 1818, էջ 161): Միլթոնի պատմական երկից այս և այլ արտահայտություններ Քարլայը նշել էր իր «Նոթատետրեր»-ում 1822 թ. ապրիլին (տե՛ս Two Note Books, էջ 23):

անկարևոր գիշերվա, երբ երկու մրահուն եղբայրներ՝ համառ ու անհողորդ Յենգստը և Յորսան¹ (**Յովաստակ** և **Նժույգ**), վճռեցին մարդաորսի ելնել Բրիտանիա, քանզի [իրենց] հայրենի երկրում վարագաորսն [արդեն] սպառման շեմին էր², և այդպիսով մի քանի քաղցյալ անգլերից կազմավորվեց անգլիական ազգը և արմատներ արձակեց այստեղ ու ծնունդ տվեց *քեզ*, օ՛ր Ընթերցող: Յենգստի բովանդակ արշավանքների մասին արդ հազիվ կեսեջանոց պատշաճ պատմություն կարող է գրվել, այնինչ **Լորդ-բաղաբազխի օբսիդրոյան այցը**³ պատկառու հատորով է ներկայացվում մարդկությանը: Եվ ի՞նչ է ստացվում սրանից: Մի՞թե Բրանզվիքի թատրոնի⁴ փյուզումը միլիոն անգամ նույնքան պատմություն չի պահանջում, որքան որ Աշխարհի ստեղծումը⁵:

Օգտվելով պատրաստի համեմատությունից՝ Համաշխարհային պատմությունը կարող ենք նմանեցնել կախարդական ոստայնի⁶ և գմայլանքով մտազննել, թե ինչպես էր հարածուն գործվածքը փիլիսոփայական ներըմբռնումով և հույլ անհոգությամբ [շարունակում] ոստայնագործվել այդ դերձանների ու ծոպերի խճճված, անսահման բազմությունից, որ մենք **Յուշեր** ենք անվանում, ավելին՝ յուրաքանչյուր նոր երկարացման [ժամանակ], ամեն մի նոր **դարաշրջանում** [այն] փոխում էր իր բովանդակ չափերը, իր երանգն ու կառուցվածքը՝ ընդհուպ մինչև բուն սկիզբը: Յետևաբար, մի՞թե Տակիտուսի գրառումները հազար յոթ հարյուր տարի անց նորովի չեն իմաստավորվում Մոնտեպյոյի ձեռքերում⁷: Նիբուռը⁸ պետք է վերամեկնաբանի մեզ համար, Էլ ավելի մեծ հեռավորությունից, Տիտուս Լիվիուսի⁹ երկերը: Ավելին՝ հրեա Մարգարեի և Օրենսդրի կրոնական հնամյա ժամանակագրությունները խույս չեն տալիս համանման ճակատագրից, և շատ ծանրակշիռ այսիորներ նոր փիլիսոփայական ակնոցով են զննում Մովսեսի հայտնությունը¹⁰ և ջանում վերակերտել այս

¹ Յենգլիյստ (մահ. 488?) և Յորսա (մահ. 455?), առասպելական եղբայրներ, որոնք ավանդաբար համարվում են դեպի Անգլիա 5-րդ դարում անգլասաքսոնական առաջին արշավանքների առաջնորդները: Փակագծերում Բարլայլը տալիս է նրանց անունների նշանակությունն արդի անգլերենում:

² Բարլայլի այս դիտարկումը, թե Յենգլիյստն ու Յորսան Բրիտանիա են արշավել, քանի որ նրանց հայրենի երկրում վարագաորսը սպառվելու շեմին էր, ակներևաբար հղում է անգլիացի ժամանակագիր և Սենտ-Ասաֆի եպիսկոպոս Չեֆրի Մոնմութի (շուրջ 1095-1155) «Պատմություն Բրիտանիայի արքաների» երկի այն հատվածին, որտեղ եղբայրները բացատրում են իրենց արշավանքի նպատակը հետևյալ կերպ. «Մեր հայրենիքում [ընդունված] ավանդույթ է, որ երբ մարդկանց քանակն ավելանում է, տարբեր նահանգների առաջնորդներն ի մի են գալիս և հրահանգում բովանդակ թագավորության երիտասարդներին հավաքվել իրենց առջև: Այնուհետ նրանք վիճակ են գցում և ընտրում ամենաամուր և ուժեղ երիտասարդներին, որոնք պետք է ճամփա ընկնեն օտար երկրներ և ապրուստ հոգան իրենց համար: Սա արվում է նրա համար, որպեսզի այն երկիրը, որում նրանք ծնվել են, կարողանա ապաստվել մարդկանց հավելյալ քանակից» (տե՛ս Geoffrey of Monmouth. *The History of the Kings of Britain*. Trans. Lewis G. M. Thorpe. Harmondsworth: Penguin, 1966, էջ 156):

³ Ակնարկում է անգլիացի հոգևորական Ռոբերտ Դիլոն Բրոուֆորդի (1795-1847) *The Lord Mayor's Visit to Oxford in the Month of July, 1826* (1826) երկը:

⁴ Բրանզվիքի Թագավորական թատրոնը բացվել էր 1828 թ. փետրվարի 25-ին և փուլվել էրեք օր անց: Թատրոնի տեղում այժմ Ուիլյոնի համերգասրահն (*Wilton's Music Hall*) է:

⁵ Ակնարկում է արարչագործության պատմի սեղմությունը Ծննդոց 1-3-ում:

⁶ Բարլայլը համաշխարհային պատմությունը կախարդական ոստայնի է նմանեցնում նաև իր «Դիորո» հոդվածում (1833) (տե՛ս *Essays on Literature*, էջ 224):

⁷ Ակնարկում է Տակիտուսի «Տարեգրությունը» ու «Պատմությունը» երկերը և ֆրանսիացի փիլիսոփա, իրավագետ Շառլ Մոնտեպյոյի «Պատողություններ հռոմեացիների մեծության և անկման պատճառների մասին» (1734) աշխատությունը, որոնք քննության են առնում Հռոմի անկումը: Թոմաս Գորդոնի (շուրջ 1691-1750) թարգմանությամբ Տակիտուսի «Երկեր»-ի Բարլայլի օրինակը պահվում է *Carlyle House*-ում:

⁸ Բարտոլոմեոս Գեորգ Նիբուռ (1776-1831), դանիական ծագմամբ գերմանացի պատմաբան, գիտական պատմագրության հիմնադիրը: Գլխավոր աշխատությունն է «Հռոմի պատմությունը առաջին պունիկյան պատերազմից մինչև Կոնստանտինոսի մահը» (1811-1832), որը Հռոմի պատմության առաջին հիմնարար մեկնությունն է նոր դարաշրջանում:

⁹ Տիտուս Լիվիուս (Ք. ա. 64/59-Ք. հ. 12/17), հռոմեացի պատմագիր, Հռոմի առաջին ամբողջական պատմության՝ «Բաղաքի հիմնումից ի վեր» (Ք. ա. 27-9) կողողային երկի հեղինակը, որ մինչ 18-րդ դարը խորունկ ազդեցություն է գործել պատմագրական մտքի պարզացման վրա:

¹⁰ Ակնարկում է գերմանացի բողոքական աստվածաբան և արևելագետ Յոհան Գոթֆրիդ Լյիսիորնի (1752-1827) «Ներածություն Հին կտակարանի» (1780-1783) կոթողային երկը, որը Բարլայլը համարում էր

հարյուրամյակի համար այն, ինչը երեսուն դար առաջ ակներևաբար անսահման նշանակություն ուներ բոլորի համար: Քննեցեք Պատմությունը, որի ակունքներն աղոտաբար ձգվում են դեպի տարակա ժամանակը՝ մոայլորեն լույս ընկնելով գաղտնախորհուրդ Չավիտենությունից: Նրա ծայրերն այսօր պարուրում են **մեդ**, որոնցից էլ, իբրև գործող անձինք ու պատմողներ միաժամանակ, մենք այժմ կազմված ենք: Ըստ ձևի՝ մենք կարող ենք մաթեմատիկորեն անվանել այն **անդրածիգ-անհանդիպական**¹ (Hyperbolic-Asymptotic), որ մշտապես **անվերջ** ընդլայնվում է մեր շուրջը, շուտով սեղմվում նեղ սահմաններում [և] շարունակ ավելի ու ավելի նեղանում առ մեր ետևում [ծավալվող] անհուն խորությունը: Ըստ [իր] Էուրոպյան և կարևորության՝ այն կոչվել է «ճշմարիտ Էպոս և տիեզերական Աստվածաշունչ, **որի** «անսահմանափակ ներշնչումը» ոչ ոք՝ Բեդլամից² դուրս կամ դրանից ներս, կասկածի չի առնի»³: * * *

Հնգամատյանի վերագրություն: Այստեղից Քարլայլը հիշատակում է նաև իր «Ի վերայ պատմութեան» հոդվածում (1830) (տե՛ս Գ. Ա. Ճաղարյան, Թոմաս Քարլայլը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «ՎԷՄ», էջ 77):

¹ Ասիմպտոտը ուղիղ գիծ է, իսկ հիպերբոլան՝ կոր, որ մի ծայրով շարունակ մոտենում է ասիմպտոտին՝ առանց երբևէ դիպչելու նրան, իսկ մյուս ծայրով շարունակ կորանում նրանից դեպի անվերջություն: Անցյալը, որում խտացած է պատմությունը, ներկայացվում է այն ծայրով, առ որը ավելի ու ավելի են գծերը մոտենում միմյանց, մինչդեռ ներկան պատկերվում է այն ծայրով, որից այդ գծերը տարամխտվում են դեպի անվերջություն: Ժամանակի և պատմության՝ իբրև եռաչափ պատկերի քարլայլյան բնորոշման մասին տե՛ս Գ. Ա. Ճաղարյան, Թոմաս Քարլայլը և նրա «Ի վերայ պատմութեան» հոդվածը, «ՎԷՄ», էջ 70: Մաթեմատիկայի հանդեպ Քարլայլի վաղ հետաքրքրության մասին տե՛ս Fred Kaplan, *Նշվ. աշխ.*, էջ 31-36 և Carlisle Moore. *Carlyle: Mathematics and 'Mathesis'*, in *Carlyle Past and Present*. Ed. K. J. Fielding and Rodger L. Tarr. London: Vision, 1976, էջ 61-96: Հիլ Շայլը նկատում է, որ պատմության հոլովույթն «ասիմպտոտ» մաթեմատիկական հասկացությամբ է բնորոշում նաև Յ. Գ. Յերդերը, ուստի չի բացառվում Քարլայլի կողմից ուղղակի փոխառության հանգամանքը (տե՛ս Hill Shine, *Նշվ. աշխ.*, էջ 21, ծնթ. 43):

² Առաջին հոգեբուժական հաստատությունն Անգլիայում (հիմնվել է 1247 թ.-ին՝ որպես մենաստան, ապա 1330 թ. վերափոխվել հիվանդանոցի): Այժմ հայտնի է Բեթլեմի Թագավորական հոսպիտալ անունով: «Բեթլեմ»/«Բեդլամ»-ը «Բեթղեհեն»-ի հնչյունաբանորեն աղճատված ձևն է: «Բեդլամ»-ը ժամանակի ընթացքում վերածվել է հասարակ գոյականի և նշանակում է՝ խելագարություն, քառասյին իրադրություն, խառնաշփոթ:

³ Թեև ստույգ մեջբերում չէ Քարլայլի որևէ երկից, սակայն այս ընկալումը հաճախադեպ է նրա պատմահայեցողության ծիրում: Օր.՝ իր «Վաղգերմանական գրականություն» (1831) հոդվածում Քարլայլը «Ռեյնելե աղվեսը» բնորոշում է իբրև «ճշմարիտ աշխարհագիր» (*Miscellanies*, 2:325), իսկ «Ի վերայ կենսագրութեան» (1832) հոդվածում գրում է. «Բոլոր առասպելները մի ժամանակ փիլիսոփայություններ էին, դրանց հավատում էին: Հնադարյան Էպոսները, քանի դեռ դրանք Եպիկական էին [...], ընկալվում էին որպես պատմություններ, իրապատում դեպքեր» (տե՛ս *Essays on Literature*, էջ 135): Քարլայլը Հոմերոսի երկերն իբրև օրինակ էր վերցրել իր «Ֆրանսիական հեղափոխությունը. պատմություն» կոթողային երկի համար՝ հույս հայտնելով, որ իր աշխատությունը «հեղափոխության Էպոսապատումը» կլինի (*Letters*, 7:306; տե՛ս նաև 6:446, 7:24): Ըստ նրա՝ Էպոսները պատմական վավերագրեր են, որոնցում ամրագրված են տարբեր ժամանակների մշակութային արժեքներն ու հավատալիքները: Հայտ՝ Քարլայլը հետևում էր Եպիկական պոեզիայի վերաբերյալ ժամանակակից պատկերացումներին: Անգլիացի դասական բանասեր, գրաքննադատ և աստվածաբան Ռիչարդ Բենթլիի (1662-1742) այն ընկալումը, թե «Իլիական»-ը կարող է բնորոշվել իբրև «երգերի ու հագներգերի» ժողովածու, սովորական էր դարձել Վիկտորյանական դարաշրջանում (տե՛ս John L. Myres. *Homer and His Critics*. Ed. Dorothea Gray. London: Routledge, 1958, էջ 49), իսկ իր ժամանակի թերևս ամենականավոր բանասեր Ֆրիդրիխ Վոլֆն (1759-1824) ավելի ուշ պնդելու էր, որ Հոմերոսի Եպիկական պոեզիան կազմվել են նախագրային շրջանում ստեղծված երգերն ի մի բերելով (հանգամանորեն տե՛ս Frank M. Turner. *The Greek Heritage in Victorian Britain*. New Haven, CT: Yale University Press, 1981, էջ 138-147 և Donald M. Foerster. *The Fortunes of Epic Poetry: A Study in English and American Criticism, 1750-1950*. Washington, DC: Catholic University of America Press, 1962, էջ 59-60, 72-73): Ուստի պատահական չէ, որ գրականության մասին իր 1838 թ. բանախոսություններում Քարլայլն «Իլիական»-ի «բալլադային պատկերներ»-ը համեմատել էր ռոբին-հուդյան ավանդապրոցների հետ (տե՛ս *History of Literature*, էջ 16, 20: Տե՛ս նաև Thomas Carlyle. *Past and Present*. Ed. Chris R. Vanden Bossche, Joel J. Brattin, and D. J. Trela. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 2005, p. 132 և “Early Kings of Norway”, in *Historical Essays*, էջ 401-402): Ըստ Քարլայլի՝ ժողովրդական բանահյուսության, առասպելաբանության մեջ առկա է «անհողաբաշխ, [համր] պոեզիա», որը ևս պետք է իր ուրույն տեղը գտնի համաշխարհային պատմության մեջ: Որոշ առումով այն համաշխարհային պատմության նույնիսկ ամենակարևոր

* * *

Յոդվածի այս հակիրճանքը (summary) կազմվել է Թ. Քարլայի անմիջական մասնակցությամբ 1857 թ. «**Uniform Edition**»-ի համար և ներառվել հեղինակի կենդանության օրոք երկերի երկու հետագա ժողովածուներում (1869 թ. **Library Edition** և 1872 թ. **People's Edition**) ևս:

Հակիրճանք

Ներածական ճառի պատահիկ՝ արտասանված «Տարրական ազնվության տարածման ընկերության» առաջ: – Պատմությունն [իբրև] բոլոր գիտություններից ամենաօգտավետը. Ուղերձ կամ Կտակ, որ հանուր մարդկությունը հղում է ամեն մի մարդու: Մեր վեհագույն պատմաբանների անչափելի անկատարությունը: Անցյալ կոչվող այն *բանից*, որն այժմ մուսը է, որքա՞ն շատ մենք գիտենք: Բնությունը, սակայն, մեղավոր չէ: Մարդու հարուստ սպառնազինությունն ինքնահրատարակման համար՝ լեզվի, գրչի ու տպագրահաստոցի միջոցով: Նրա գլխավոր պակասությունները. ազնվության և բանականության պակասը: Իրադարձությունը, որն ամենից արժանին է հայտնի լինելու, ամենայն հավանականությամբ [մնացյալ] բոլորից ամենաքիչը կհիշատակվի: – Պատմական հորձանքի վտանգները: Պատմությունը, նախքան այն կգորի Յամաշխարհային պատմություն դառնալ, կարիք ունի ամենայն ինչի խտացման: Իմաստուն Յիշողություն և իմաստուն Մոռացություն: Մոռացությունն [իբրև] մութ էջ, որի վրա Յիշողությունը շարագրում է լույսի նշանագրերով: Թերությունները գործնականում բավականաչափ են: Բայց և այնպես, ի վերջո հիշատակելի է լոկ այն, ինչը պտուղ է տալիս: Պատմական հեռանկար: Պատմությունն [իբրև] ճշմարիտ էպոս և տիեզերական Աստվածաշունչ:

Геворк Тшагарян, НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»). В статье рассматривается историографическая концепция шотландского мыслителя Томаса Карлейля (1795-1881) на фоне важнейших интеллектуальных преобразований его эпохи. С точки зрения Карлейля, история - это раздел литературы, а не научная дисциплина. Автор выступает как «художник», стремящийся «оживить» прошлое, раскрывая исторические факты и события выразительными литературными средствами. Тем самым он внёс уникальный вклад в дальнейшее развитие теоретической концепции «литературной истории».

Предпринята попытка показать, как идеи Карлейля об определении объекта и субъекта истории четко и выгодно отличают его от историографических воззрений его британских предшественников. Вместо позитивистских формул и абстракций, автор стремится формулировать историческую дисциплину как высшую форму поэзии. Следовательно, образное воссоздание исторического события гораздо более существенно, чем строгая фактичность повествования. По его мнению, высшая форма поэзии состоит в «правильном истолковании действительности и истории». Эту идею он развил в своих ранних очерках «Об истории» (1830) и «Снова об истории» (1833).

Во втором очерке Карлейля представлены его взгляды на ключевую роль исторического опыта в культуре человека в гораздо более яркой форме. Автор предлагает своего рода рапсодическое размышление об истории как священной «эпической поэме»

բաղադրիչն է [ռոմանտիկական պատմագրության տեսանկյունից], սի լոկ դրա միջոցով է, որ պատմաբանը կարող է հասու լինել հասարակ մարդկանց առոնին կյանքին (Louise M. Young, նշվ. աշխ., էջ 61):

и «божественном Писании». Он не отходит от богоцентрических представлений о прошлом, но приходит к теоретическим прозрениям, обозначив идею взаимосвязи истории и диссеминации исторических (и культурных) информации. В этих понятиях прослеживаются зачатки концепции относительности исторического времени и повествования, концепция, которая получила дальнейшее развитие в историографической мысли XX века.

Перевод и подробные комментарии к эссе Карлейля «Снова об истории» (1830) дают развёрнутое представление об исторической концепции автора.

Ключевые слова: Томас Карлейль, Э.Гиббон, Д.Юм, просветительская историография, светское Евангелие, И.Г.Гердер, истористское понимание, сенсимонисты, традиционная историография, поэзия, пророческая история, биография, идеальный историк, Новалис, «сжатие» истории, «мудрое забвение», «мудрая память», селекция, литературная история.

Gevorg Tshagharian, ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).

The paper discusses the historiographical outlook and practice of Scottish thinker Thomas Carlyle (1795-1881) in the course of momentous transformations in the historiography of his age. In Carlyle's frame of mind, history is considered as a branch of literature, and not an academic discipline. Carlyle reflects himself as an «artist in history» who seeks to «enliven» the past, revealing historical facts and events by vivid literary means based on authentic evidence, and thereby making a unique contribution to the further development of the theoretical concept of «literary history».

An attempt is made to indicate how Carlyle's perceptions regarding the formulation of the object and subject of history are distinguishing him from his British precursors. Instead of the positivistic formulas and abstractions, Carlyle aimed to breathe a new life to the historical discipline while defining it as the highest form of poetry. Hence, the imaginative re-creation of a historical event was appreciated as more substantial than the precise factuality of narrative. According to him, the highest form of poetry implied «the right interpretation of Reality and History», and he developed this idea in his early historical manifestos like «On History» (1830) and «On History Again» (1833).

Carlyle's second essay on history restates his views on the pivotal role of historical experience in human culture, but in a far more colorful form than the essay of 1830. The author's historical comprehension, in this article, is represented in a broader framework. It offers a rhapsodic meditation on history as an inspired «Epic Poem» and «Divine Scripture». Here, he does not break with the God-centered perception of the past, but he comes to new theoretical insights, outlining the idea of interrelation between history and dissemination of historical data leading to the relativity of historical time and narrative. These notions were further developed in the 20th century historiographical thought.

The translation and meticulous annotations of Carlyle's essay «On History Again» tend to provide further insights into the apprehension of the author's historical conception.

Key words: Thomas Carlyle, E. Gibbon, D. Hume, Enlightenment historiography, secular Gospel, J. G. Herder, historicist appreciation, Saint-Simonians, conventional historiography, poetry, prophetic history, biography, perfect historian, Novalis, «compression» of history, «wise oblivion», «wise memory», selection, literary history.